№ 245 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 5

1908

ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 5 № 245

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆոն № 253.

ԽՈԼԵՐԱՅՈՎ

և այլ տարափոխիկ հիւանդութիւններով անկարելի է վարակվել՝ եթէ գործ է ածվում մաքուր ջուր: Առաջարկում ենք հէնց այժմ ձեռք բերել ջուր մաքրելու համար ջրազտիչ ապպարատ „Հիդրիօլ“ անունով:

Նրա գործադրելու ձևը շատ հասարակ է: Զտիչ մասը հեշտութեամբ ամրացվում է ամեն մի ծորակի (кранъ) վրա, օրինակ՝ ջրմուղու, հեշտաեռի և ուրիշ աարկաների: Ամենակեղտոտ ջուրը համարեա թէ վայրկենապէս փոխարկվում է պարզ-բիւրեղեայ ջրի և մաքրվում է բակտերիաներից: Կարճ ժամանակի ընթացքում «ՀԻԴՐԻՕԼ» ապպարատը տարածվել է տասնեակ հազարներով, որը ապացոյց է նրա գործնականութեան: Ամեն մի ապպարատի հետ ուղարկվում են անհրաժեշտ մասերի պաշար և ձեռնարկ: Զտիչ «ՀԻԴՐԻՕԼԻ» գինը միայն—2 ր. 50 կ.: Ծանապարհածախքը ապպրողի հաշւին.—Եւրոպակ. Ռուսաստան—50 կ., Ասիական—75 կ.:

Պատուէրները հասցէագրել՝ Единственному представителю для всей России Торговому Дому Александръ Гольдеръ и К-о. МОСКВА, Садовая-Спасская, д. Петрова.

(Հ. ու. Կ.) ա. 15—12

Հինգշաբթի, նոյեմբերի 6-ին,

հանգուցեալ բժշկապետ

ԵԳՈՐ ՍԵՐԳԷԵՎԻՉ ԲԱԲԵԱՆԻ

մահվան քառասնօրեակին

Վանքի մայր-եկեղեցում պատարագից յետոյ տեղի կունենայ հոգեհանգիստ: Պատարագի սկիզբն է առաւօտեան $10^1/_2$ ժամին, հոգեհանգիստը՝ 12-ին:

Որի համար խորին վշտով յայտնում են հանգուցեալի այրին և եղբայրները:

(Հ. Ն.) 2—1

Նորին Սրբութիւն Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութեան համար

եկած պատգամաւորների պատւին տրվելիք ճաշի կարգադրիչների կողմից յայտարարվում է, որ ճաշը կայանալու է ուրբաթ, ամսիս 7-ին, Թիֆլիսի Ժողովարանի դահլիճում, ժամը 4-ին: Ճաշկերոյթին մասնակցելու ստորագրութեան ընդունելութիւնը՝ Գ. Ն. Թաթոսեանի և Ա. Ն. Միլովի մօտ՝ կը տևի մինչև հինգշաբթի, նոյեմբերի 6-ը:

Ի դիմաց կարգադրիչների՝

Պ. Ս. Ղամբարեան, Ա. Ի. Խատիսեան, Ս. Ս. Յարութիւնեան, Գ. Ն. Թաթոսեան, Մ. Ն. Աթաբէգեան, Ա. Ն. Միլով, Յ. Կ. Քոչարեան:

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

ԱՐՏԻՍՏԻԿ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ

Հինգշաբթի, նոյեմբերի 6-ին

Կը կայանայ

Գալա-ներկայացում

Մասնակցութեամբ հայ դերասանների լաւագոյն ուժերի:

Կը ներկայացվի

Գ. Սունդուկեանի յայտնի կօմեդիան

ՊԵՊՕ

3 արարուածով

Վ. Ե. Ր. Ջ. Ը.

M-lle ՖԻՖԻ

Դրամա 1 արար., գը-Մօպասանի

Մասնակցում են. տ. տ. Արաքս, Գուլազեան, Մայսուրեան, Մելիքեան, Վարդուհի, Յասմիկ, պ. պ. Աւետեան, Զարիֆեան, Թաշճեան, Թորոսեան, Մամիկոնեան, Միրաղեան, Սանթուրճեան, Սևումեան, Տէր-Դաւթեան, Վանչիր և ուրիշները:

Սկիզբը երեկոյեան ուղիղ ժամը 8-ին:

Ռեժիսեօր՝ Ս. Քափանակեան

«ՄԵՂՈՒ»

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Խնդրում է ընկերութեան անդամուհիներին և անդամներին շնորհ բերել

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ,

որը տեղի է ունենալու չորեքշաբթի, նոյեմբերի 5-ին, արհեստանոցի դահլիճում, Гановская № 7.

Ընդհանուր ժողովը զբաղվելու է պատրաստի ձեռագործների վաճառման միջոցների խնդրով:

Նախագահ՝ Սօֆիա Մինասեանց

Քարտուղար՝ Ֆլօրա Վարդանեանց

(Կ. Հ.) ա. 2—2

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Մ. Գ. Դանիէլ-Բէկ

Ընդունելութիւնը: Առաւօտեան 10—2 ժ., Երեկոյեան 4—6 ժ.

Հասցէ՝ Ртищевская ул., № 7.

(Հ. Չ.) ա. 50—22

ՃԳՆԱԺԱՄԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Թաւրիզը կանգնած է ճգնաժամի առաջ:

Երկարատև մաքառումները և ընդհարումները, որոնց շնորհիւ Թաւրիզը և առ հասարակ Ատրպատականը դարձել են պատերազմական դաշտ, քայքայել են սովորական կեանքի կարգերը և առաջացրել մի վտանգված դրութիւն:

Կառավարութիւնը տրամադրութիւն չէ ցոյց տալիս զիջելու Սաթթար-խանին և յեղափոխականներին, բայց և ույժ չունի նրանց ընկճելու, իսկ վերջիններս պնդում են իրանց պահանջների վրա և յետ մղում կառավարչական զօրքերի արշաւանքները:

Սակայն անվերջ շարունակվել չէ կարող այդպիսի դրութիւնը, և ահա, ըստ երեւոյթին, մենք մտնում ենք ճգնաժամային շրջանը:

Թաւրիզը քառորդ միլիօնի մի ազգաբնակութիւն ունի, որը տնային պիտոյքների և ամեն տեսակ մթերքների կարիք ունի: Ինքը քաղաքը իր միջոցներով այդ ևս դժուարանում է լրացնել պահանջները: Ուտեստի պաշարները սպառվում են, իսկ նորերը շատ սահմանափակ քանակութեամբ են ներմուծվում քաղաքի մէջ: Կառավարչական զօրքերը, հնարաւորութիւն չունենալով ներս խուժելու քաղաքի մէջ, որոշել են պահել քաղաքը պաշարված դրութեան մէջ և յարձակում գործել, երբ բաւականաչափ ուժեղ կը լինեն:

Եւրոպացիները, նրանց թւում և ռուսները, հեռանում են քաղաքից: Վերջին օրերում շատերը Ջուլֆայի վրայով անցան դէպի Կովկաս:

Թաւրիզի դրութիւնը դառնում է ծանր և վտանգաւոր:

Մասնաւորապէս այդ դրութիւնը սպառնական է Թաւրիզի և Ատրպատականի հայութեան համար: Եւ անշուշտ կարևոր է այժմեանից իսկ հոգատար լինել, որպէս զի տեղի չունենան այնպիսի եղելութիւններ, որոնք Պարսկաստանի հողի վրա էլ տան զոհեր և կորուստներ, որոնք այնքան աղէտալի եղան հայերի համար ուրիշ տեղերում:

Կրիտիկական է հայերի դրութիւնը: Պարսկական հին ռէժիմի մարդիկ ցանկանում են, որ հայերը նրանց կողմը լինեն, իսկ յեղափոխականները ցանկանում են, որ հայերը իրանց հետ լինեն և աջակցեն իրանց գործողութիւններին:

Եթէ հայերը սակաւաթիւ չը լինէին և այնպիսի մի ույժ ներկայացնէին, որ իրանք ինքնուրոյն մի զօրութիւն կազմած լինէին, անշուշտ, դրութիւնը ծանր չէր լինի, որովհետև նրանք կարող կը լինէին բաւականաչափ հեղինակաւոր ույժ առաջ բերել և իրանց պաշտպանել. բայց իրականութիւնն այն է, որ նրանք շատ չնչին մի ույժ են ներկայացնում, որը դիմադրող դեր կատարել չէ կարող լուրջ կերպով և մեծ ծաւալով:

Ներկայ ճգնաժամային շրջանում Թաւրիզի հայերի համար անհրաժեշտ է յատուկ հոգատարութիւն:

Դէպքերը շատ արագ կարող են առնել կերպարանք սաստիկ և եթէ նախատեսված չեն լինի փրկութեան միջոցներ, կարող են առաջ գալ կորուստներ արհաւիրքներ հայերի գլխին:

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Հոկտեմբերի 3-ին Երևանից ստացանք հետևեալ հեռագիրը, որ երեկոյեան ուշ ստանալու պատճառով անհնար եղաւ լոյս ընծայել «Մշակի» երեկվայ համարում.

Թիֆլիսի «Հայրենիք» թերթը առանձին յաւելուածով, հայերէն և ռուսերէն լեզուներով, հրատարակել է հեռագիր Էջմիածնից, որ իբր թէ թիւրքահայ պատգամաւորները Ահարոնեանի ղեկավարութեամբ ճնշումով հեռացրել են Օրմանեանի թեկնածութիւնը, որ սկզբում մեծ շանսեր ունէր, և խռովարարների խումբը բռնութեամբ զրկել է ձայնից Գարեգին վարդապետին, իբրև Երուսաղէմի պատրիարքի ներկայացուցչի:

Այդ ամբողջ հաղորդագրութիւնը չարամիտ զրպարտութիւն է: Մենք թիւրքահայերի աշխարհական ու հոգևորական բոլոր պատգամաւորներս, դեռ Ռուսաստան գալուց և Ահարոնեանին հանդիպելուց առաջ, կրօնական հակառակ էինք Օրմանեանի թեկնածութեանը: Եւ այդ հակառակութիւնը հետևանք էր թէ մեր ժողովրդի և թէ մեզ ընտրողների ու կարծիքների: Ընտրութեան օրը, սրբազան ... մենք խղճմտաբար կատարեցինք մեր պարտքը, ընտրելով ... արժանաւորագոյն հովւապետներին՝ Իզմիրլեանին և Դուրեանին:

Գարեգին վարդապետին ձայնից զրկելը կատարվել է սինօդի կարգադրութեամբ, համաձայն Երուսաղէմի պատրիարքի հրահանգի, որը իր ներկայացուցչութիւնը նրանից վերցնելով՝ յանձնել էր Աշոտ եպիսկոպոսին:

Ընտրութիւնները կատարվել են պետական իշխանաւորների ներկայութեամբ ազատ, օրինակելի կարգապահութեամբ և առանց որևէ ճնշման նշանի, ուստի մենք միաձայն գայրոյթով բողոքում ենք «Հայրենիք» թերթի զրպարտութեան ու սուտ տեղեկութիւնների դէմ, ցաւելով դէպի լրագրական խօսքը ցոյց տրված այդ անպատուաբեր վերաբերմունքի համար:

Թիւրքահայ 45 աշխարհական և հոգևորական պատգամաւորների լիազօրութեամբ

Յակոբ-Աւետ եպիսկոպոս և Մինաս Չերազ

—

Պետերբուրգ, 31 հոկտեմբերի

Լուր է պտտում, որ Կոմմիսարժեվսկայայի թոյլատրվելու է, Ուայլդի «Սալոմէյա» պիէսան յանկարծակի արգելելու պատճառով կրած վնասները ծածկելու համար, պիէսան ներկայացնել մի քանի անգամ, թոյլատրելով հանդիսականներին ներկայ լինել յատուկ հրաւիրատոմսերով և այն էլ թանկացված վճարներով:

Ներքին գործերի մինիստրութիւնը «Россія» լրագրի առիթով պատասխանելու է Դումայի բիւջէտային մասնաժողովի հարցապնդումին, որ նրա հրատարակութիւնը մասնաւոր ձեռնարկութիւն է և պետական գանձարանից նպաստ չէ ստանում:

Վախճանվել է առաջին Պետական Դումայի անդամ, յայտնի զեմստվային գործիչ իշ. Դ. Մ. Շախովսկին:

«Нов. Вр.» ապացուցանում է թիւրքական և պարսկական յեղափոխութեան կապ ունենալը «Դաշնակցութեան» համագումարի որոշումների և հայերի ձգտումների հետ: Լրագիրը նախազգուշացնում է Ռուսաստանին, որովհետև ռուսաց դիպլօմատիան Թաւրիզում գործում է հայերի թելադրութեամբ, իսկ «Баку», «Закавказье» և ուրիշները ագիտացիա են մղում ի նպաստ պարսկական յեղափոխութեան և երգում են պարսկական Գարիբալդիի՝ Սաթթար-խանի սխրագործութիւնները: («Кс.», «Б.»)

—

Գանձակ, 1 նոյեմբերի

Հոկտեմբերի 31-ի գիշերը խլվեց երկու մարդու կեանք: Պօղոս Սարգսեան անձական հաշիւների աստառի տակ ատրճանակի երեք հարուածով տեղն ու տեղն սպանելով Ցական Մանուկեանցին՝ ինքը ներկայանում է ոստիկանութեան: Մարդասպանը բանտ է տարված:

Այս դէպքից չանցած 20 րոպէ ս. Յովհաննէս եկեղեցուց մի քանի քայլ հեռու լսվեցին համազարկի ձայներ, որոնց հետևեց խանութպանների և ժողովրդի սրտապատառ փախուստը: Երբ փողոցները դատարկվեցին մարդկային շնչից, խուզարկու ոստիկանութիւնը գտաւ հրապարակի վրա մահացու վէրքերով Սարգիս Ղարա-Սուլէյմանեանցին: Թէ առաջինը և թէ երկրորդը տարված են հիւանդանոց:

Սարգօ

—

Պարիզ, 3 նոյեմբերի

Երէկ առաւօտեան հանգուցեալ Մեծ Իշխան Ալէքսէյ Ալէքսանդրօվիչի մարմինը զմռսեցին, հագցրին ռուսաց նաւատորմիղի գեներալ ծովապետի և գեներալ-ադիւտանտի զգեստ ու դրին զինւորական անկողնում: Կէսօրից յետոյ մարմինը դրվեց դագաղի մէջ: («Հ. Գ.»)

—

Հելսինգֆօրս, 3 նոյեմբերի

Հէնց որ Մեծ Իշխան Ալէքսէյ Ալէքսանդրօվիչի մահվան լուրը ստացվեց, տաճարում, գեներալ-նահանգապետի և բոլոր իշխանութիւնների ներկայութեամբ, հոգեհանգիստ կատարվեց: («Հ. Գ.»)

—

Բրեստ, 3 նոյեմբերի

Մեծ Իշխան Ալէքսէյ Ալէքսանդրօվիչի մահվան առիթով 13 ֆրանսիացի նաւաստիներ և միչմաններ և 12 նաւաստիներ «Корейецъ» նաւից, 6 օֆիցերների հետ, մեկնեցին, պատւոր պահակախմբի պաշտօնը հանգուցեալի դիակի մօտ կատարելու համար: Հանգուցեալի մարմնի տեղափոխութեանը կուղեկցեն 100 ֆրանսիացի նաւաստիներ: («Հ. Գ.»)

—

Պարիզ, 4 նոյեմբերի

Վաղը Մեծ Իշխան Ալէքսէյ Ալէքսանդրօվիչի մարմինը արտակարգ գնացքով կուղարկվի Պետերբուրգ: («Հ. Գ.»)

—

Լոնդոն, 3 նոյեմբերի

Բէյտերին Պէկինից հաղորդում են, որ չինական կայսրուհին մեռաւ: («Հ. Գ.»)

—

Շերբուրգ, 3 նոյեմբերի

Երէկ երեկոյեան եկաւ շվէդական թագաւորական զոյգը: («Հ. Գ.»)

—

Շերբուրգ, 3 նոյեմբերի

Շվէդական թագաւորական զոյգը մեկնեց Պօրտսմուտ: («Հ. Գ.»)

—

Թաւրիզ, 3 նոյեմբերի

Մօտ օրերս Կ. Պօլիս, Պարիզ և Բեռլին է գնալու Թաւրիզի անջումանի անդամ Աղա-Նաղին՝ Եւրոպային Ատրպատականի իրերի դրութեան հետ ծանօթացնելու նպատակով: («Հ. Գ.»)

—

Թէհրան, 1 նոյեմբերի

Շահը հրաժարվում է սահմանադրութիւն մտցնել: Դիպլօմատիական մարմնին նա ներկայացրել է 300 ստորագրութիւններով վաւերացված Բաղէ-շահում կազմված պետիցիան և նահանգապետներից ստացված հեռագիրները, որոնցով հաղորդում են, որ ժողովուրդը սահմանադրութիւն չէ կամենում: Դեսպանները բողոքում են այդ բանի դէմ, որովհետև նրանք վաճառականներից ստացել են յայտարարութիւն, որ նրանք պետիցիային ստորագրել են սպառնալիքների ազդեցութեան տակ: («Кс.»)

—

Կ. Պօլսից ստացված տեղեկութիւնների համաձայն, առաջին զօրաբանակի հրամանատարը հրամայել է սուլթանի անձնական պահակախմբին գալ Եըլդըզ-Քեօշկից: Հրամանը կատարվել է անմիջապէս:

Սուլթանը դարձեալ շրջապատել է իրան լրտեսներով և բացարձակ կերպով հակվում է ռէակցիոն կուսակցութեան կողմը: Ի միջի այլոց, գանձարանին նա սկսել է յանձնել ոչ թէ իր կալուածների եկամուտը, որ տարեկան կազմում է 400 հազար լիրա, այլ նրանց տոկոսը: Սպասում են, որ, այդ պատճառներից գրգռված, երիտասարդ-թիւրքերը շուտով փորձ կանեն գահընկէց անել սուլթանին: («Б. В.»)

—

Կ. Պօլիս, 28 հոկտեմբերի

Պարլամենտը պաշտպանելու համար կազմակերպվում է ազգային գվարդիա, որը պէտք է բաղկացած լինի երիտասարդ-թիւրքերի ակումբի 5000 անդամներից:

Բացի դրանից պարլամենտական պահակների պարտականութիւնները յանձնվում են եգերների 2-րդ բատալիօնին, որը յատկապէս այդ նպատակով կանչված է Սալօնիկից:

Հայոց նորընտիր Իզմիրլեան պատրիարքը դիմել է մեծ վէզիրին առաջարկութիւն անելով հայկական գաւառների տխուր վիճակի մասին:

Քեամիլ փաշան յայտնեց, որ կառավարութիւնը մինչև այժմ զբաղված էր արտաքին քաղաքականութեամբ: Իսկ այժմ նա հնարաւորութիւն ունի ըզբաղվելու ներքին հարցերով ևս և նրա առաջին գործերից մէկը կը լինի հոգ տանել վերականգնելու հանդարտութիւնը հայկական գաւառներում: («Б. В.»)

—

Բեռլին, 3 նոյեմբերի

«Norddeutche Al. Zeit.»-ը հաղորդում է, որ Պետերբուրգի գերմանական դեսպանատան խորհրդատու ֆօն-Միքէլ նշանակված է Կ. Պօլսի դեսպանատան առաջին քարտուղար: Նրա տեղ նշանակված է կոմս Միրբախ-Գարֆֆ, Պարիզի դեսպանատան երկրորդ քարտուղարը: («Հ. Գ.»)

—

Վիեննա, 3 նոյեմբերի

Վաղը պաշտօնական լրագրում կը հրատարակվի կայսրի ձեռագիր նամակը կաբինէտը փոխելու առիթով:

Բարոն Բէերի (Բէկկ?) անունով ուղարկված նամակի մէջ յիշատակվում է նրա արդիւնաւոր հայրենասիրական գործունէութեան մասին: Մնացած մինիստրներին, որոնք հեռանում են պաշտօններից, կայսրը նոյնպէս շնորհակալութիւն է յայտնում և շնորհում է բարձր շքանշաններ: Բինէրտին նշանակում է մինիստր նախագահ և առաջարկում է նրան աշխատել, որ

պարլամենտական կուսակցութիւնները աջակցեն կառավարութեանը՝ կարգի բերելու գործը այժմեան սիստեմի հիմունքները։ («Հ. Գ.»)

—

Թաւրիզ, 31 հոկտեմբերի

Յեղափոխականների կոմիտէտը պարսկական Ջուլֆա է ուղարկել մի զօրախումբ, որը այնտեղ ամրութիւններ կառուցանելով պէտք է դիմադրութիւն ցոյց տայ ռուսական զօրքերին Պարսկաստան մտնելու դէպքում։ («Б.»)

—

Վիեննա, 28 հոկտեմբերի

Նոր ստացված տեղեկութիւնների համաձայն, աւստրիական զօրքերը շարժվեցին սերբիական սահմանների ուղղութեամբ Պլեվլեից մինչև Վիշեգրադ։ Քիչ յետոյ սկսվեց հրացանաձգութիւն և երևացին հրդեհի հրեղէն բոցերը։

Աւստրիացիները յետ մղեցին սերբիական չետաների խումբը, որ աշխատում էր Բոսնիա մտնել։ («Б.»)

—

Վիեննա, 3 նոյեմբերի

Պաշտօնական «Zon. Mont. Zeit.»-ի երէկվայ տեղեկութիւնը յուզալի տրամադրութիւն յարուցեց բորսայում, ուր լուրեր տարածվեցին, թէ երեք կորպուսներ մոբիլիզացիա են եղել։ Կառավարական կոմիսարը բորսայում յայտնեց, որ այդ լուրը սխալ է. ընդհակառակն, այսօր Բելգրադից տեղեկութիւն ստացվեց, որ տրամադրութիւնը աւելի հանգիստ է։ Արովհետև բորսան շարունակվեց լքեալ տրամադրութեամբ, բայց կոմիսարը փակելուց առաջ կրկնեց իր յայտարարութիւնը աւելի վճռական կերպով, սակայն ապարդիւն։

«N. Fr. Presse»-ն հաղորդում է, որ Էրենտալ, ընդունելով բանկերի ներկայացուցիչներին, յայտնեց, որ քաղաքական դրութիւնը չէ լաւացել համեմատած Բոսնիան միացնելու վայրկեանից. ագրեսիվ տրամադրութիւններ Աւստրիան չունի։ Ընդհանուր տրամադրութիւնը ներվային է։ («Հ. Գ.»)

—

Լոնդոն, 3 նոյեմբերի

Համայնքների պալատում Բաւլըր այն միտքը յայտնեց, թէ Անգլիան, քանի գրաւում է իր այժմեան դրութիւնը, բանակցութիւններ սկսէ միւս ծովային պետութիւնների հետ ծովային ուժերի վրա ծախսվող ծախքերը ընդհանուր և համեմատական կերպով կրճատելու վերաբերութեամբ։

Ասկվիտը նկատեց, որ միւս ծովային պետութիւններին լաւ յայտնի են այն հայեացքները, որ յաճախակի արտայայտել է անգլիական կառավարութիւնը այն աւելորդ բեռան մասին, որ դրված է հարկեր վճարողների վրա պատերազմական նաւեր կառուցանելու համար ծախսեր անելու մրցութեան շնորհիւ։

Լոնդոնէլը հարց դրեց, որ անհրաժեշտ է անմիջապէս նոր առաջնակարգ զրահանաւեր կառուցել Ասկվիտի յիշատակած սկզբունքը պահպանելու նպատակով, և հարց տուեց՝ մտադի՞ր է, արդեօք, կառավարութիւնը ձեռնարկել այդպիսի նաւեր կառուցանելու ի լրումն նրանց, որոնց կառուցումը հաստատված է մինչև ֆինանսական տարվայ վերջը։

Ասկվիտը պատասխանեց, որ ծովակալութեան կարծիքով այդ բանին անհրաժեշտութիւն չը կայ, կառավարութիւնը մտադիր չէ փոխել այն ծրագիրը, որ հաստատված է ֆինանսական տարում։ («Հ. Գ.»)

—

Բերլին, 25 հոկտեմբերի

Կազաբլանկի դէպքի առիթով գերմանական դիպլօմատիայի կատարած անարժան մանեօվրը, որ քիչ մնաց պատերազմի պատճառ դառնար, բայց որը վերջացաւ այդ միևնոյն դիպլօմատիայի լուրջ պարտութեամբ, աւելի ևս խախտել է կանցլեր Բիւլօվի դրութիւնը։ Մինչև անգամ կայսրն էլ, ըստ երևոյթին, վճռել է զոհել նրան։ Բնորոշ է այդ կողմից այն լուրը, որ կայսրը կանցլերի պաշտօնը առաջարկել է իր անձնական ընկեր իշխան Ֆիւրստենբերգին։

Ժուռնալիստ Մաքսիմիլիան Գարդէնը «Zukunft» թերթում տպագրել է մի յօդուած «Կայսրի դէմ» վերնագրով, որտեղ ապացուցանում է, որ Վիլհէլմ կայսրը կործանաբեր արտաքին քաղաքականութիւն է վարում Գերմանիայի համար, և որ Գերմանիայի ու Թագաւորական տան շահի տեսակէտից անհրաժեշտ է, որ կայսրը հրաժարվի գահից։ («Б.»)

—

Բերլին, 1 նոյեմբերի

Երկրում հակա-դինաստիական խիստ տրամադրութիւն է նկատվում։ Միտինգներում և ժողովներում բանաձևեր են ընդունվում, դատապարտում են կայսրի և կանցլերի գործունէութեան եղանակը։

Գաւառական մամուլը առաջարկում է որպէս բողոք պատիւներ չը տալ Վիլհէլմ կայսրին անցնելու ժամանակ։

—

Բելգրադ, 28 հոկտեմբերի

Տեղիս ուսանողական ժողովը որոշել է պատերազմի դէպքում համալսարանի շէնքը դարձնել զօրանոց։

Զինուորական մինիստրին յայտարարութիւն է ուղարկված բոլոր ուսանողներին սերբիական բանակի շարքերի մէջ հաշվելու։ («Кс.»)

—

Լրագիրների արտակարգ յաւելուածների մէջ հաղորդված է, որ բօսնիական ապստամբների ռազմախումբը պայթեցրել է սերբիական Կօնիցա քաղաքում գտնվող աւստրիական զօրանոցները։ Սպանված են 170 զինուորներ։ Ապստամբները փախել են լեռները։ Այդ տեղեկութիւնը այլևս կասկած չէ թողնում, որ Բօսնիան և Հերցեգովինան բռնկված են ապստամբութեամբ աւստրիական տիրապետութեան դէմ։ Ոչ միայն ուղղափառ ազգաբնակութիւնն է զէնքի դիմել, այլ և մահմեդականները։ Վերջին օրերս, ինչպէս լաւ յայտնի է, Բօսնիա են անցել սերբիական մի քանի խումբ չետնիկներ, որոնք առաջ գործում էին Մակեդոնիայում։ Սերբիական կառավարութիւնը իրան պահում է կօրրեկտ և ոչ մի աջակցութիւն չէ ցոյց տալիս չետնիկներին։ («Б. В.»)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԴՈՐԾԵՐԸ

(Սեփ. թղթ.)

—

Թաւրիզ, 30 հոկտեմբերի

Մենք նախատեսում էինք, որ «դեռ քաշելիք ունի մեր երկիրը...», բայց չէինք կարծում, որ սարսափները այսքան մօտ են մեզ... Խօսքս Մուժամբար չարաբաստիկ գիւղի մասին է...

Մինչ կառավարչապետ Էյն-ուդ-Դօվլէն, կառավարութեան առաջնակարգ անձնաւորութիւնը, հաւատացնում էր իր նամակով հայոց առաջնորդարանին, ի հետևումն վերջինիս արած դիմումի—«գիւղին վտանգ է սպառնում կառավարութեան հրոսակապետ Սամ և Դ.ահրաման խաների կողմից և այլն», որ գիւղի ապահովութիւնը չի խախտվի կառավարականների կողմից, այսօր ամբողջ աշխարհի առաջ ծառացած մերկ ու տկլոր, արիւնաթաթաւ, արհաւրալից փաստերը գալիս են վաւերացնելու յանձին արքայազն Էյն-ուդ-Դօվլէի միապետական բռնակալութեան հաւաստիացումները...

Այսօր առաւօտեան վաղ այստեղ հասած դասիդը (հետիոտն սուրհանդակ) պատմում է, որ երէկ առաւօտեան վերոյիշեալ հրոսակապետները բազմաթիւ ձիաւորներով (ասիդի ասելով 2000, որը մեր կարծիքով չափազանցութիւն է) յարձակվում են գիւղի վրա, կոտորում են 15—20 հոգի մարդ, կին և երեխայ, քշում են ամբողջ գիւղի տաւարը, այրում են դէզերը, ուզում են յարձակվել եկեղեցին և բակը լցված կանանց վրա. այդտեղ գտնվող գիւղացիք համբերութիւնը հատած դիմում են ինքնապաշտպանութեան՝ գոնէ կանանց պատիւը փրկելու կամ պատուաւոր մահանալու համար. այդ տեսնելով մեր քաջամարտիկ հրոսակապետները՝ երեք անգամ թնդանօթ են արձակում... Ահա թէ ուր է հասնում կառավարութեան վայրագութիւնները հանդէպ խաղաղ բնակչութեան, գիւղացիութեան. թնդանօթներով գիւղեր, եկեղեցիներ ռմբակոծել...

Դրութեան այդպիսի կացութեան ժամին, զանազան ճանապարհներով մի քանի դասիդներ համարձակութիւն են ունենում լուրը Թաւրիզ հասցնել, գիւղացիների հաւարին հասնելու համար։ Դասիդներից երկուսը հասան. դրութիւնը այդ է եղել մինչև երեկոյեան մօտաւորապէս ժամը 3—4-ը, իսկ թէ նրանից յետոյ ինչ է եղել, կոտորվել են ամենքը, թէ ազատված են—դեռ ոչ մի տեղեկութիւն չը կայ։

Այս զգայուն լուրը առնելուն պէս Թեմական խորհուրդը կառավարական պաշտօնէութեան այդ վայրագ, անզուսպ, դիւային արարքի մասին անմիջապէս զեկուցում տուեց քաղաքի բոլոր հիւպատոսութիւններին, իսկ Թեմական խորհրդի անդամներ Աւագ-խան Աւագեանը և պ. Նիկոլայ Տէր-Յովհաննիսեանը ճանապարհվեցին Վասբինջ գիւղը անձամբ իրերի դրութիւնը ներկայացնելու կառավարչապետ Էյն-ուդ-Դօվլէին։

Գիւղատէր ռուսահպատակ Ադիլ-խանը դիմեց ռուսաց հիւպատոսին, որը նոյնպէս անմիջապէս իր փոխանորդին և դրագրին ուղարկեց Էյն-ուդ-Դօվլէի մօտ։

Լսում ենք, որ Սաթթար-խանն էլ մօտ 100 ձիաւոր է ուղարկել գիւղացոց օգնութեան, բայց ինչ կարող են անել 100 ձիաւորները հարիւրաւորների (եթէ ոչ հազարաւորների) և թնդանօթների դիմաց։

Դասիդը պատմում էր, որ Սար և Սօհրաւլ գիւղերի մօտից անցնելիս տեսել է ամբողջ դէզերը և գիւղերը հրդեհի մատնված. թէ դեռ ինչեր պիտի լսենք ժամ առ ժամ, չեմ կարող գուշակել։

Երէկ ժամը 1-ին հայոց թաղում մի խանութում սպանվեց մի 20 տարեկան հայ երիտասարդ. սպանողը պարսիկ էր. դեռ յայտնի չէ դէպքը առաջացել է անզգուշութիւնի՞ց, որովհետև սպանվողը իր ատրճանակով է սպանվել, թէ որոշ պրովոկացիայի թելադրութեան հետևանքից։

Սկարլատինը և խոլերան կոտորում են. ճիշտ թիւ ունենալ դժուար է. օրական 60-ից մինչև 100 կարելի է ենթադրել։

—

Թաւրիզ, 27 հոկտեմբերի

Դրութեան անորոշութեան, անգործութեան, թանգութեան և հիւանդութեան պատճառով յարմարութիւն ունեցողները հեռանում են քաղաքից։ Քրիստոնեաները անցնում են Ռուսաստան, իսկ պարսիկները՝ գլխաւորապէս Պարսկաստանի խաղաղ համարվող գիւղերն ու քաղաքները։

Սկսված գաղթը եթէ այսպէս շարունակվելու լինի, մի քանի ժամանակից քրիստոնեաների քանակն էլ բաւական կը նուազի։

Սուջայի-Նիզամի տղան նստել է հօր տեղ և շահի հրամանով արգելել է Ռուսաստանից ներմուծվող ապրանքների մուտքը։ Ինչպէս երևում է, կառավարութիւնը մտադիր է այս անգամին քաղաքը պաշարման ենթարկելով անձնատուր անել. թէպէտ այդ ոչ անկարելի, գոնէ խիստ դժուար իրագործելի է թւում մեզ, որովհետև սահմանադրականները նախատեսելով այդ՝ հնար եղածին չափ ցորեն են ամբարում միջնաբերդում։

Այսօր Ուրմիից քաղաքս ժամանեց անգլիական ընդհանուր հիւպատոսը, որ մի տարուց աւելի էր՝ ինչ գտնվում էր Ուրմիայում՝ թիւրք-պարսկական վիճելի խնդիրների առիթով։

Պարսկական կառավարական հաստատութիւնների մէջ պօստը և մաքսն էր միայն, որ բէլգիացիների շնորհիւ կարգ ու կանոնի տակ էր ընկել։ Բայց դրանցից առաջինը՝ մի երկու տարի առաջ յօղինիզմական պոռթկումների պատճառով անցաւ պարսիկների ձեռքը և այսօր հին և նոր վարչութեան տարբերութեան աչք է ծակում։ Այստեղ պօստը ստացվում էր երեքշաբթի, հինգշաբթի օրերը, բայց ներկայումս այլ ևս որոշ նշանակութիւն չունին. երեքշաբթի օրվանը ստացվում է հինգշաբթի, հինգշաբթի օրվանը՝ ուրբաթ կամ շաբաթ և այլն։

Այստեղից Մարանդ 6 ժամվայ ճանապարհ է։ Սուջայի-Նիզամի սպանութեան առիթով պօստին ուղեկցող սուրհանդակը այնտեղ բանտարկվելու պատճառով՝ ամբողջ 8 օր Ռուսաստանի պօստը չը ստացանք. մինչդեռ առաւելն պիտի ուշանար 24 ժամ։

Լսելով որ Կովկասի ռուսական թերթերում գրված է եղել, որ իբր սահմանադրականները օտարահպատակ հաստատութիւններին և առևտրականներին մեծ վնաս են պատճառել, երևի այդ հիման վրա՝ Նահանգական անջումանը մի յայտարարութիւնով ի միջի այլոց յայտնում է ամենքին, ի թիւս որոնց և հայոց առաջնորդարանին, որ կազմված է մի յանձնախումբ քննելու քաղաքացիների վնասը, իմանալու համար թէ այդ վնասները որ կողմի շնորհիւ է առաջ եկել՝ սահմանադրականների թէ կառավարականների, որ ըստ այնմ էլ բաւարարութիւն տրվի։

Իբօ

ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

—

Պետերբուրգի կառավարչական բարձր շրջաններում այն կարծիքն է տիրում, որ Վիեննայի կաբինետը վերջ ի վերջոյ կը համաձայնվի հրաժարվել Չերնոգորիայի ծովափի վրա ոստիկանական հսկողութիւն ունենալու իրաւունքից։

Դժուար կը լինի համաձայնութեան գալ Սերբիայի նկատմամբ, սակայն այդ հարցում ևս հնարաւորութիւնը չէ սպառված, եթէ միայն անգլօ-ռուսական դիպլօմատիան կարող լինի օգուտ քաղել այն բարեյաջող վայրկեանից, որը ստեղծված է այժմ Աւստրո-Ունգարիայի ներքին կեանքի մէջ ստեղծված բարդութիւնների շնորհիւ։

Տեղեկութիւն է ստացված, որ համաժողովական «Alliance Israelite» միութիւնը, բալկանեան գործերի համար կոնֆերենցիան գումարվելու դէպքում, մտադիր է նրա քննութեանն առաջարկել Ռումինիայի հրէաների կացութիւնը բարելաւելու խնդիրը։

Թեհրանի նոտաբլների կողմից Բաղէշահում արտայայտած ցանկութիւնների և դրանց համաձայն շահի տրամադրութեան մասին՝ վերացնելու սահմանադրութիւնը՝ լուրը ստացվելուն պէս, Պետերբուրգից իսկոյն հեռագրով առաջարկված է Թէհրանի ռուսաց ներկայացուցչին, յիշեցնելու շահին Ռուսաստանին և Մեծ-Բրիտանիային տուած իր խոստումները մէջլիսը հրաւիրելու համար։

Աւստրիական մամուլի այն ցուցմունքը, թէ Ռուսաստանը մտադիր է յափշտակել Ատրպատականը, Պետերբուրգի շրջաններում կտրական կերպով ժխտում են։ Ռուսաստանը չէ կամենում աւելացնել իր տիրապետութիւնները ի հաշիւ Պարսկաստանի, բայց և այնպէս նա պատրաստ է զէնքի ուժով պաշտպանել Թաւրիզում գտնվող ռուսահպատակների իրաւունքները, եթէ հանգամանքները ստիպելու լինեն։ («Р. С.»)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՐՏԱԴԻՐ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

I

Արգելվում է տների, հիւրանոցների, կահաւորված սենեակների, պանդոկների տէրերին և առհասարակ բոլորին թոյլ տալ ապրելու իրանց մօտ կամ ժամանակաւորապէս մնալու ադմինիստրատիվ կարգով աքսորված անձանց։

Այս պարտադիր որոշումը չը կատարողները ենթարկվում են երեք ամսով բանտարկութեան կամ մինչև 3000 րուբլի տուգանքի։

Այս կարգադրութեան վրա հսկելու է Թիֆլիսի նահանգապետը, որ լիազօրութիւն է ստացել իմ կողմից։

Այս պարտադիր որոշումը իր ուժի մէջն է մտնում իր հրատարակվելու օրից հետ։

II

1) Տների բոլոր գլխաւոր և կողմնակի մուտքերի սանդուղքները տնատէրերի կարգադրութեամբ և հաշւով պէտք է լուսաւորված լինեն մութն ընկնելուց սկսած մինչև գիշերվայ ժամը 11-ը։

2) Կացարանների բոլոր բակերը պէտք է լուսաւորված լինեն լապտերով, մութն ընկնելուց մինչև արշալոյս տնատիրոջ հաշւով և նրա կարգադրութեամբ։

3) Երեկոյեան ժամը 11-ից մինչև արեւածագը տնատէրերը պարտաւոր են տների դարբասները և մուտքերը փակ պահել և այգպիսիները բանալ միմիայն զանգահարութիւնը լսելով։

Տնատէրերից նրանք, կամ թէ նրանց փոխարինողները, որոնք չեն կատարի իմ այս պարտադիր որոշումը, կենթարկվեն մինչև 3000 րուբլի տուգանքի կամ երեք ամսով բանտարկութեան։

Այս որոշման վրա հսկողութիւն ունենալու է ինձնից լիազօրված Թիֆլիսի նահանգապետը։

Այս պարտադիր որոշումը իր ուժի մէջ է մտնում հրատարակութեան օրից։

Իսկականը ստորագրեց՝ Թիֆլիսի նահանգի և Զաքաթալայի շրջանի գեներալ-նահանգապետ գեներալ-շտաբի գ.-մ. Շիրինկին։

30 հոկտեմբերի 1908 թ.

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Կիսլովոդսկ, 30 հոկտեմբերի

Այսօր, հանդիսաւոր մաղթանքից յետոյ, բացվեց տեղիս քաղաքային արական գիմնազիան։ Այսպիսով քաղաքն այժմ ունի երկու գիմնազիա օրիորդաց, որ արդէն երկու տարի է բացված, և տղայոց։ Տղայոց գիմնազիան այս տարի կունենայ չորս դասարան և հետևեալ տարիները կը բացվեն մնացած դասարանները։ Աշակերտների թիւը առայժմ, ուշ բացվելու պատճառով, 60 է. յունվարին հաւանական է կրկնապատկվի։ Կիսլովոդսկը, շնորհիւ իր առողջարար կլիմայի, հնարաւորութիւն կը տայ շատ ծնողների ուրիշ տեղերից իրանց վատառողջ երեխաներին տեղափոխել այստեղի գիմնազիաները։

***

ՄԵՐ ԲԱՐՔԵՐԻՑ

—

Հայկական կեանքը երբեմն արտադրում է այնպիսի այլանդակ երևոյթներ, որոնք յատուկ են միայն իրան։ Այդպիսի այլանդակ երևոյթներից մեկը ձրի գրադարան կազմելն է մեր անապահով, խեղճ ու կրակ հեղինակների հաշւով։ Այստեղ յարմար է ասել՝ ճիշտ որ երբեմն բարեգործութիւնը չարագործութիւն է։

Յաճախ է պատահում, որ դուք լրագիրներում կարդում էք յօդուածներ կամ յայտարարութիւններ, որոնցով զանազան տեղերից իբր թէ բարեմիտ մարդիկ դիմումներ են անում հայ հեղինակներին իրանց հեղինակութիւններից մի-մի օրինակ ձրի նուիրել այս-ինչ կամ այն-ինչ նոր կազմվելիք գրադարանին և ակամայ բացագանչում էք. «Խեղճ, ողորմելի հայ գրողներ, բաւական չէ՝ որ ձեր գրքերը զանազան գրավաճառների մօտ, գրախանութներում կամ ձեր բնակարաններում փտում և մկների կերակուր դառնալով՝ չեն վաճառվում, այժմ էլ պարտական էք՝ ձեր գրքերից ազգասիրաբար մի-մի օրինակ նուիրելով ձրի գրադարաններ կազմել»։

Սա չարչիութիւն է։

Ես չը գիտեմ սրան ուրիշ ինչ անուն տալ։ Սա միայն հային է յատուկ։ Այստեղ ակամայ մի հարց է առաջ գալիս, թէ արդեօք ընթերցանութեան ծարաւ զգացողները մի՞թէ գրքի համար փող չունեն *), կամ եթէ չունեն, մի՞թէ գիրք չէ կարելի ձեռք բերել հաւաքական ուժով։

Սա ինչ բարեմտութիւն է կամ բարեգործութիւն՝ հեղինակի հաշւով գրադարան կազմել։ Մի՞թէ հեղինակը ձրի է տպագրել իր գիրքը. չէ՞ որ նա իր գիրքը տպելու համար փող է տուել՝ թղթի, գրաշարի, տպարանատիրոջ, կազմարարի, տեղափոխութեան և այլն։ Եւ այս բոլորը նա արել է իր անապահով տեղով, հազար ու մի չարչարանքով, անքուն գիշերներ լուսացնելով, իր կամ իր ընտանիքի բերանի պատառը կտրելով, սրբագրչի վարձատրելով կամ ինքը սրբագրելով և այլն, և այժմ դուք ինչ իրաւունքով ուզում էք օգտվել ուրիշների անքուն գիշերների աշխատանքից և ձրիակերութեան էք սովորեցնում առանց այդ էլ անընթերցասէր և գրքերի տուած փողը կորած համարող հայ ժողովրդին։ Առանց այդ էլ նա կենդանի թաղում է իր գրողներին, մի՞թէ դուք էլ գալիս էք խրախոյս տալու նրա այդ վարմունքին։

Եւ դեռ մեզանում գտնվում են բարեխիղճ գրողներ, որոնք մեծ ուրախութեամբ կատարում են դիմողների կամքը, խրախուսելով նրանց այդ քայլը և համաճարակի բնաւորութիւն տալով այդ երևոյթին։

Բացի դրանից՝ քիչ չէ պատահում հեղինակից որպէս նուէր գիրք խնդրելը. այսպէս՝ խնդրում են նրա ազգականները, բարեկամները, ընկերներն ու ծանօթները և այլն, այսինքն նրանք, որոնք իսկապէս պէտք է լինէին նրա գրքերն առնողները և նրան նիւթապէս խրախուսողները։ Ես դէմ չեմ գիրք նուիրելուն, բայց դա պէտք է լինի ինքնաբերաբար։

Աւելացրէք դրա վրա և տպարանում գրաշարների կողմից՝ հեղինակի գրքերի վերաբերմամբ կատարվող գողութիւնները, այն ժամանակ հասկանալի կը լինի թէ ինչու մեզանում չեն ծախվում գրքերը։

Սա մի հիւանդոտ երևոյթ է, որի առաջը պէտք է առնեն հէնց իրանք գրողները։

Խ. Բաքալեան

*) Փող չունեցողները մի քէֆի մէջ տասնեակներ կը շպրտեն, կամ գուցէ ամեն բանի փող ունեն, բայց գրքի փող չունեն։ Խ. Բ.

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

—

Երևան, 3 նոյեմբերի

Ամսիս 1-ին նահանգական դատարանում քննվում էր հայ-թուրքական ընդհարումներին վերաբերեալ վերջին գործը։ Մեղադրվում էին այս գործում 47 հայեր, որոնք 1905 թ-ի յունիսի 4 և 5-ին մեծ խմբերով զինված յարձակվել էին թուրքական Ուշի, Քէչիլքեանդ, Նազրվան և Թաքլա գիւղերի վրա, այրել էին տները, յափշտակել էին եղած գոյքը, վիրաւորել և սպանել էին մի քանի մարդկանց։ Մեղադրվում էին Կարբի գիւղից 20 հոգի, Աշտարակից 23 հոգի և չորս հոգի էլ ուրիշ գիւղերից։

Նախագահում էր դատարանի անդամ պ. Եակուբենկօն, իսկ մեղադրում էր դատախազի օգնական պ. Իզդէպսկին։ Կարբեցիներին և միւս գիւղերից 3-ին պաշտպանում էր երդուեալ-հաւատարմատար պ. Խրժանովսկին. իսկ աշտարակցիներին և միւս մէկ գիւղացուն պաշտպանում էր երդուեալ-հաւատարմատար պ. Լևոն Մուշեղեանը։

Գլխաւոր մեղադրող վկաներն էին մի կոզակ օֆիցեր և մի քանի կօզակներ, որոնք այս մեղադրվողներին բռնել և յանձնել էին ոստիկանութեան։

Երդուեալ-հաւատարմատար պ. Խրժանովսկին իր ճառի մէջ գլխաւորապէս ծանրանում էր այն հանգամանքի վրա, որ դժուար էր պատժել իր պաշտպանութեանը ենթակայ մեղադրեալներին, որոնք պատահաբար ընկել են կօզակների ձեռքը, երբ այդ այրվող թուրք գիւղերի մօտից անցնում էին նրանք իրանց սեփական գործերով։

Իսկ երդուեալ-հաւատարմատար պ. Լևոն Մուշեղեանը իր բնաւորութեանը յատուկ ոգևորութեամբ և գեղեցիկ կերպով նկարագրեց հայ-թուրքական ընդհարումների ողբերգական անցեալը, ապացուցանելով, որ կօզակների տուած ցուցմունքները խիստ հակասական են և չեն կարող ծառայել իբրև հիմք այն ծանր մեղադրանքի՝ 269-րդ յօդուածի, որով դատապարտվում են բոլոր մեղադրեալները։

Այն մեղադրվողներին, որոնց պաշտպանում էր Խրժանովսկին, դատարանը մեղաւոր ճանաչեց վեց հոգու և դատապարտեց ութ ամսվայ բանտարկութեան, զրկելով իրաւունքներից։ Իսկ պ. Լևոն Մուշեղեանցի պաշտպանածներից մեղադրվեց միմիայն մէկ հոգի նոյն պատժով, մնացածներին դատարանը բոլորովին արդարացրեց։

Գ. Աղադադեան

ԽՕԼԵՐԱ

—

Երևան, 3 նոյեմբերի

Հոկտեմբերի 17-ից մինչև 31-ը խօլերայով մեռել են 15 թուրք, 7 հայ։ Ուրեմն սկսված օրից մինչև ամսի վերջը մեռել են 32 հոգի, իսկ լաւացել են 11 հոգի։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

✦ Երկուշաբթի, նոյեմբերի 3-ին, Ալեքսանդրո-Նեվսկի զինուորական տաճարում Վրաստանի էկզարխի պաշտօնակատարը բարձր հոգևորականութեան հետ հոգեհանգիստ կատարեց Մեծ իշխան Ալեքսեյ Ալեքսանդրովիչի յիշատակին։ Ներկայ էին Փոխարքան իր կնոջ հետ, նրա զինուորական և քաղաքացիական մասերի օգնականները, խորհրդի անդամները, դիւանատան պետը, Թիֆլիսի նահանգապետը և Թիֆլիսում գտնվող Անդրկովկասի նահանգապետները, գեներալիտէտը և շատ աղօթողներ։

✦ Կովկասի Փոխարքայ կոմս Ի. Ի. Վօրոնցով-Դաշկովի անունով Թիֆլիսի վաճառականական ընկերութիւնը Մանթաշեան

առևտրական դպրոցում հաստատել է թօշակներ հետևեալների համար. Ալիխանեան Սա., Կանդէլակի Վլ., Սարուխանեան Սուրէն: Ամենայն հայոց կաթողիկոս հանգուցեալ Մկրտիչ Խրիմեանի անունով թօշակը տրված է Մկրտչեան Սուրէնին։

✦ Հինգշաբթի, նոյեմբերի 6-ին, Դրամատիկ Դերասանական Ընկերակցութիւնը ի պատիւ կաթողիկոսական թիւրքահայ պատգամաւորների արտիստական թատրոնում տալիս է մի հանդիսաւոր ներկայացում. խաղալու են Գ. Սունդուկեանցի յայտնի «Պէպօն» և «M-elle Ֆիֆի»: Ներկայացման օրը Ընկերակցութեան առանձին խնդրանօք թատրօն են հրաւիրված թիւրքահայ կաթողիկոսական պատգամաւորներ և հայ տաղանդաւոր դրամատուրգ Գ. Սունդուկեանը: Ներկայացմանը մասնակցում են դերասաններ՝ Տէր-Դաւթեան, Միրզոյեան, տ. Վարդուհի և ներկայ սեզոնի դերասանական խմբի ամբողջ կազմը։

✦ Նոյեմբերի 2-ին Թիֆլիսի քաղաքային դումայական տնտեսական մասնաժողովի նիստում հնարաւոր համարվեց պակասեցնել մսի սակագինը այսպէս. տաւարի մսի ֆունտը 10 կոպէկից իջեցնել 9 և կէս. ոչխարինը՝ 11 կոպէկից իջեցնել 10 կոպէկ, իսկ գոմէշինը 7 կոպէկից իջեցնել 6 կոպէկ: Այս նոր սակագինը կը յանձնվի դումային նրա հէնց առաջին նիստում։

✦ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը, Ներսիսեան դպրոցի վարչութեան խնդիրքի համաձայն, պատուիրել է արգելել մանրավաճառներին առևտուր անել Ներսէսօվսկայա փողոցում, դպրանոցի շինութեան առաջ։

✦ Վրաց բանաստեղծ Ակակի Ծերեթելու յօբելեանական յանձնաժողովը որոշել է յօբելեանը կատարել դեկտեմբերի 9-ին արքունական թատրօնում։

✦ «Зак. Обоз.» թերթում կարդում ենք. «Նկատի առնելով՝ որ ինչ-որ անյայտ մարդիկ քաղաքում լուրեր են տարածում «Зак. Обоз.» թերթի դադարման մասին, որ իբր նրա փոխարէն լինելու է «Новости Закавказія», սրանով մենք տեղեկացնում ենք, որ վերջին թերթի հետ ոչ մի առնչութիւն չունենք մենք և հրատարակում ենք մեր օրագիրը նախկին պայմաններով, որով շուտով մտադրութիւն ունենք մեծացնել նրա ծաւալը»։

✦ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը առաջարկել է պօստ-հեռագրական և էլեկտրաքարշի վարչութիւններին ունենալ բաւարար թւով բանուորներ ձիւնը հեռագրաթելերի և էլեկտրաթելերի վրայից մաքրելու համար։

✦ «Т. Л.»-ի Բաթումի թղթակիցը հաղորդում է, որ այդ քաղաքում նոյեմբերի 28-ին, 3-րդ քաղաքամասում, սանիտարական հոգաբարձուները գտել են 8 և 3 տարեկան մանուկների դիակներ: Քննութիւնը պարզել է, որ խղճալիները մահացել են քաղցածութիւնից...

✦ Երկրորդ Պետական Դումայի դատապարտված անդամ Ջափարիձէին տեղափոխելու են Կովկասի բանտերից մինը։

✦ Պետերբուրգի մասնաւոր բանկը մտադրվում է Թիֆլիսում բաժանմունք բանալ։

✦ Կովկասեան զինւորական նահանգական դատարանի գործերը քննելու համար ուղարկված է գեներալ Իլլիւադէրօվը։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

✦ Թիֆլիսի ժամ.-գեն. նահանգապետի կարգադրութեամբ Թիֆլիսի բնակիչներ Ստեփան Բէգլ. Արուշանեան, Թիֆլիսի 3-րդ գիմնազիայի նախկին աշակերտներ Ալեքսանդր Տէր-Անդրէասեան, Արշակ Մով. Ահարոնեան և Յովհաննէս Եակ. Թէրզիբաշեան և նրանց ծնողները, իբրև հասարակութեան հանգստութեան համար վտանգավոր անձինք, աքսորվում են գեներալ-նահանգապետութեան սահմաններից զինւորական դրութեան ամբողջ շրջանում։

✦ Նոյն կարգադրութեամբ Թիֆլիսեցիներ Մարկ Կուլագինը, Ստեփան Կարկոտաձէն և Ալեքսէյ Բուգաւշվիլին ենթարկվում են երեք ամսով բանտարկութեան, իսկ յետոյ աքսորի։

✦ Նոյն կարգադրութեամբ Թիֆլիսեցի Գր. Գր. Աղէլխանեան և միլիցիայի պրապօրշչիկ Իշխ. Կօրոլով ենթարկվում են 15 րուբլի տուգանքի կամ 3 օրով բանտարկութեան: Հասցէների սեղանի կանօնները խախտելու համար Գրիգոր Աւ. Ստեփանեանց ենթարկվում է 100 րուբլի տուգանքի և Մուսա Ալի-աղան—10 ր.։

✦ Նոյեմբերի 3-ին, Սոլդատսկի բազարով էլեկտրաքարշի վագոնը անցաւ ինչ որ ֆուրգօնի վրայով, որի մէջ նստած էր մի երեխայ: Երեխան ընկաւ վագոնի տակ, սակայն շնորհիւ վրա հասած օգնութեան ազատվեց: Քաղաքային ծառայող Յարութիւնեանը նկատողութիւն արաւ վատմանին, թէ ինչու նա իր ժամանակին չը կանգնեցրեց վագոնը և կարծես դիտմամբ առաջ քշեց: Վատմանը, ի պատասխան այդ արդարացի նկատողութեան, իր ձեռքի երկաթով զարկեց Յարութիւնեանի գլխին: Այդ յանդգնութիւնը տեսնելով, ամբոխը յարձակվեց վատմանի վրա և ինքնադատաստանով լաւ ծեծեց նրան: Հազիւ ոստիկանական պաշտօնեաները կարողացան ազատել նրան կատաղած ամբոխի ձեռքից: Այսպիսի վարմունքներ էլեկտրաքարշի վատմանների կողմից անպակաս են, իսկ էլեկտրաքարշի վարչութիւնը չէ զգում իր այդպիսի ծառայողներին։

✦ Նոյեմբերի 3-ին, ժամը 3-ին, Թիֆլիսեցի Իվան Պարապանովի տանը, Ելիզավետինսկայա փողոցում, № 34, հրդեհ ծագեց 2-րդ կարգի վաճառական Աբրամ Տուբաշվիլու բնակարանում. վնասը հասնում է 1000 րուբլու։

✦ Նոյեմբերի 3-ին Կիրօչնայա և Աւճալսկայա փողոցների անկիւնում գտել են մի մարդու դիակ, որ ուղարկվեց հիւանդանոց։

✦ Նոյն օրը ձերբակալվեց «Բագու» հիւրանոցից փող յափշտակող Մամմէդ-Նաղի-Րիզա-օղլին։

✦ Նոյեմբերի 3-ին, Թիֆլիսի 2-րդ կարգի վաճառական Սմբատ Շաումօվը, խաղալով իր ատրճանակի հետ՝ իր կողակցուհի Կօլինա Լակսինայի բնակարանում, Ելիզավետինսկայա փողոցում, № 68 տանը, կրակեց անզգուշաբար, որով վիրաւորեց Լակսինային. սրա կեանքը վտանգի մէջ է: Շաումօվը ձերբակալված է: Նա թոյլատրէչ վկայական ունի։

✦ Նոյեմբերի 3-ի առաւօտեան նահանգական բանտում կախեցին Վլադիմիր Ջաղիէվին։

ԲԱԳՈՒԻ ԼՈՒՐԵՐ

✦ Հոկտեմբերի 30-ին խուզարկու ոստիկանութիւնը Ստանիսլավսկայա փողոցով գիշերը անցնելիս նկատում է 15 անյայտ մարդկանց, որոնք, տեսնելով ոստիկաններին, իսկոյն սկսում են այս ու այն կողմ փախչել. նրանցից մէկին սակայն աջողվում է բռնել. նա Զանգեզուրի գաւառի Թաղլար գիւղացի Մկրտիչ (Ասկլար) Խաչատրեան Յարութիւնեանցն է: Խուզարկելով նրան՝ գտնում են գրպանում հայերէն լեզուով գրված բաւականաչափ նամակներ, ի թիւս որոնց երկուսը նոր էր գրել իր ծնողներին ուղարկելու համար, որտեղ նա հանգստացնում էր նրանց, որպէսզի, իրան կալանաւորելու դէպքում, չանհանգստանան: Նամակում, ի միջի այլոց, ասված էր, որ խուզարկու ոստիկանութեան ագենտներից մէկին—Սմբատին—արդէն սպանել են, որ էլի երկու հոգու էլ պիտի սպանեն. Նամակների հետ միասին գտել են նաև խուզարկու ոստիկանութեան ագենտ Գեբրաիլ Դալլաքեանցի լուսանկարը: Ծնողներին ուղղած նամակում ասված էր նաև, որ Սեդրակ Բէկլարեանցը արդէն կալանաւորված է: Այդ կարևոր տեղեկութիւնները և նամակները հիմք են տուել կարծելու, որ Յարութիւնեանը մարդասպանների ու կողոպտիչների պարագլուխներից մէկն է հանդիսանում։ («Б.»)

✦ Քաղաքապետի կարգադրութեամբ «Бакинскій Рабочій» լրագրի հրատարակութիւնը, իր վնասակար ուղղութեան համար, դադարեցված է մինչև քաղաքապետութեան շրջանում արտակարգ դրութեան վերացումը։ («Кс.»)

✦ «Баку» լրագրի խմբագրութեանը ուղղված մի նամակով հայ ուսանողութիւնը հետևեալ դիմումն է անում. «Հայ ուսանողութեան ժողովի» բիւրօն իրան պարտք համարում «Արալ-Կասպիական» ընկերութեան կառավարիչ Աստուածատուր Յովհաննիսեանցին և Մանթաշեանի նաւթահանքերի կառավարիչ Նիկիտա Մովս. Տէր-Մկրտիչեանցին արած երկրորդ պարգևին դիմումից յետոյ հարկադրված է մամուլի միջոցով կրկին անգամ դիմել և առաջարկել նրանց վճարել ուսանողական դանձարանին մուրհակներով վերցրած պարտքը: Հակառակ դէպքում բիւրօն ստիպված պիտի լինի դիմել դատարանի աջակցութեանը»։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

✦ Պետերբուրգ է եկել գերմանական մի խումբ կապիտալիստների լիազօրը բանակցութիւն վարելու Կովկասում գտնվող մարգանեցի հանքերը գնելու համար: Հիմնվելիք ակցիօներական այդ ընկերութեան հիմնական դրամագլուխը լինելու է 50,000,000 րուբլի։

✦ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը կարգադրել է, որպէսզի միջնակարգ դպրոցների մանկավարժական խորհուրդները այսուհետև չազատեն աշակերտներին փոխադրական քննութիւններից մինչև իսկ հիւանդութեան դէպքում. եթէ հիւանդութիւնը այնքան լուրջ է, որ աշակերտը չէ կարող քննութիւն տալ գարնանը, կարելի է յետաձգել առաջիկայ աշնանը։

✦ Միջնորդութիւն է յարուցված՝ Եարօսլաւի Դեմիդօվեան լիցէյը համալսարանի վերածելու՝ սկիզբներում գոնէ մի ֆակուլտետով: Ինչպէս խօսում են, ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը համակրութեամբ է վերաբերվել այդ միջնորդութեանը։

✦ Մասնաւոր երկաթուղիների կողմից յարուցված միջնորդութիւնը՝ հացահատիկների ու ալիւրի տեղափոխութեան համար գոյութիւն ունեցող երկաթուղային տարիֆները աւելացնելու մասին, ի նկատի առնելով երկրի գիւղատնտեսութեան ներկայ վիճակը, ինչպէս ասում են, թողնված է առանց ընթացքի։ («Б. В.»)

✦ Մոսկվայի կօլօնիալ բորսան նախաձեռնում է կազմակերպելու առաջին անհրաժեշտութեան մթերքներով առևտուր անողների համառուսական համագումար հրաւիրել: Այդ համագումարում պէտք է մշակվի առևտրի նորմալ ժամանակամիջոցը: Համագումարի եզրակացութիւնները մտադիր են ներկայացնել Պետական Դումայի քննութեանը: Համագումարում ի միջի այլոց կը քննվի նաև ծառայողների ու նրանց ընտանիքների բարեկեցութեան մասին հոգ տանելու խնդիրը։ («Р. Сп.»)

✦ Ինչպէս արդէն հաղորդված էր, մօտիկ ապագայում տեղի է ունենալու համառուսական կանանց համագումարը: Պետերբուրգի կանանց ակումբում Ա. Ն. Շաբանօվայի այդ խնդրի մասին կարդացած զեկուցումից տեղեկանում ենք, որ կանանց համագումար հրաւիրելու միջնորդութիւնը յարուցված է եղել դեռ ևս 1902 թւին, բայց թոյլտուութիւնը ստացվել է 3 տարի յետոյ միայն և այն էլ այն պայմանով, որ միայն մասնակցէին կանայք: Չը նայելով որ համագումարի ծրագիրն այդչափ սահմանափակված ու կրճատված էր, այնուամենայնիւ կազմակերպիչ յանձնաժողովը վճռեց համագումարը հրաւիրել, սակայն հէնց բացումից առաջ Տրեպօվը, հիմնվելով սաստկացված պահպանութեան դրութեան վրա, այնպիսի պահանջներ դրեց, որ անհնարին եղաւ համագումարը բանալ և յետաձգվեց ուրիշ աւելի բարեյաջող օրերի: Այժմ համագումարին, ըստ երևոյթին, վտանգ չէ սպառնում, թէև ծրագիրը բաւականաչափ կրճատումների է ենթարկված: Ջնջված է մի ամբողջ յօդուած, որը վերաբերում է կանանց իրաւահաւասարութեան կռւին արտասահմանում, և թոյլատրված է խօսել համառուսական կանանց խորհուրդ կազմելու մասին, բայց առանց կազմելու այդպիսին։ («Слово»)

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Երկուշաբթի, նոյեմբերի 3-ին, արտիստական թատրօնում հայ դերասանական ընկերութիւնը ներկայացրեց Կօնան Դօյլի «Շերլօկ-Հօլմսը» պիէսան 4 գործողութեամբ։

«Շերլօկ Հօլմսով» Կօնան Դօյլին միանգամից արդէն համաշխարհային նշանակութիւն ստացաւ. այսօր նրա շնորհիւ ստեղծված է մի ամբողջ գրականութիւն, գրական մի ամբողջ ուղղութիւն: Իբրև դրամա «Շերլօկ-Հօլմսը» զուրկ է դրամայի արժանաւորութիւններից, դրամային յատուկ տարրերից, բայց իր սուր ակնարկներով, խորը և հմտալից դիտողութիւններով մեծ հետաքրքրութիւն է զարթեցնում։

Այդ տեսակէտից միայն մենք հասկանում ենք նրա գոյութիւնը բեմի վրա։

Առաքինութեան վերջնական յաղթանակը նա հանդէս է բերում յանձին պիէսայի գլխաւոր հերոս Շերլօկ-Հօլմսի» (պ. Զարիֆեան), որ սառնասիրտ ոգու և մտաւոր բազմակողմանի ընդունակութիւնների շնորհիւ ամենակատարելագործված ոճրագործն անգամ, որպիսին իր մէջ մարմնացնում է բժ. Մօրիարտին (պ. Սևումեան), չէ կարողանում ազատվել արդարութեան ձեռքից և կրում է իր արժանաւոր պատիժը։

Դէպքը տեղի է ունենում Լօնդօնում և ամբողջապէս պտտում է 12 միլիօնի կտակի շուրջը, որը ձեռք բերելու համար լորդերի սալօններում յարգի, քաղաքի վարիչների շրջանում ազդեցիկ և ոճրագործների ղեկավար բժ. Մօրիարտին, անսահման բիրտ կամքի և մոլութիւնների այդ համօզված, տիպիկ ներկայացուցիչը, չէր խորշում ամենահրէշաւոր ոճրագործութիւններից անգամ։

Եւ մարդկային այդ երկու հակընթաց սկզբունքների բախումը՝ առաքինութեան և մոլութեան, յանձին Շերլօկ-Հօլմսի և բժ. Մօրիարտիի, պսակվում է առաջնի յաղթութեամբ։

Պ. Զարիֆեանը Շերլօկ-Հօլմսի դերը իր մտածված խաղով, իր տիպիք գրիմով և բնորոշ ինտօնացիայով, միմիկաներով մինչև վերջ էլ կատարեց մեծ աջողութեամբ և ուղղակի հիացմունք պատճառեց հանդիսականներին։

Պ. Սևումեանը ներկայ սեզօնում երկրորդ անգամն է բեմ դուրս գալիս, իսկ այնպիսի պատասխանատու դերում, ինչպիսին է բժ. Մօրիարտիի դերը, առաջին անգամը. այնուամենայնիւ իր խաղով, իր արտայայտիչ միմիկաներով, մասամբ էլ շնորհիւ իր արտաքինի՝ ճիշտ դուրս բերեց նրա տիպը, թէև փոքր ինչ սառը: Լէդի Կատօգանի դերը, ինձ թւում է որ, չէ համապատասխանում տ. Արաքսի մշտաժպիտ դէմքին. Նրա խաղը չէր ներկայացնում այն հոգեկան խռովութիւնը, որ անկասկած պէտք է երևան գար տրագիզմի մէջ դրված մանաւանդ կանացի քնքոյշ դէմքի վրա։

Տղայի դերում տ. Գուլազեան-Նոնիկեանը աջող էր և մեծ բաւականութիւն պատճառեց։

Լաւ էին տ. Մելիքեան՝ Լալայի դերում, պ. Աւետեան՝ Լէստրադի դերում: Պ. Թաշճեան՝ Վատսօնի դերում և տ. Յասմիկ տ. Պարբսի դերում փոքր ինչ սառն էին։

Միւսները պահպանեցին անսամբլը։

Չենք կարող նկատողութիւն չանել պիէսայի թարգմանութեան մասին, որը շատ անաջող է կատարված և լի է խրթին, անմատչելի և նոյնիսկ ոչ հայերէն դարձուածներով: Պէտք է կամ նորից թարգմանել կամ թարգմանվածը մշակել։

Լ. Դ.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա. Ե. Կուլըժնըյ.—Ինչպէս հիմնել գիւղատնտեսական ընկերութիւն։—Հրատարակ. բժ. Ա. Բուդաղեանի, Պետերբուրգ, տպ. «Սուքիասեանց և Լիսենկօ», 64 երես, գինն է 10 կոպէկ։

Գիւղացու կուլտուրական - տնտեսական բարենորոգութեան գործին ուղեցոյց լինելու և ինքնագործունէութեանը զարկ տալու համար է կազմված Կուլըժնըյի ներկայ աշխատութիւնը։

Եւ միանգամայն հասկանալի է այդ գեղեցիկ ցանկութիւնը։

Ամենից աւելի չարքաշ կեանք վարողը, տարին բոլոր աշխատողը, ուրիշներին ապրեցնողը, բայց և իր աշխատանքի վաստակից զրկվածը, մշտական քաղցածը, իրաւազուրկը, տգէտը, մոռացվածը այդ միևնոյն գիւղացիութիւնն է եղել։

Բարեբաղդաբար դա մի քանի տարիներ առաջ էր. այսօր այլ վերաբերմունք է նկատվում դէպի նա: Պետութեան ազգաբնակութեան ճնշող մեծամասնութիւնը կազմող գիւղացիութեան անտանելի վիճակը, միանգամայն իրաւացի կերպով, իր վրա է դարձրել ընդհանուրի ուշադրութիւնը։

Վերջին տարիների անցքերի ցնցումների տակ գիւղացու ապագաները ոչ միայն արձագանք գտան հասարակական կազմակերպված խաւերի մէջ, ոչ միայն ժողովրդական ներկայացուցչական հաստատութեան մէջ, այլ և լսելի դարձան մինչ այդ խուլ մնացող կառավարչական շրջաններում...

Եւ ահա բացարձակօրէն հանդէս եկան ժողովրդի իսկական բարեկամները իրանց խորհուրդներով ու առաջարկութիւններով գիւղական ազգաբնակութիւնը խրոնիկական դարձած իր ծանր կացութիւնից ազատելու համար։

Այդ առաջարկները արմատական միջոցներ շատ քիչ են պարունակել իրանց մէջ, աւելի շուտ եղել են պալլիատիվներ և նոյնիսկ իբրև այդպիսին էլ գիւղական միջավայրի վրա ներգործելու հնարաւորութիւնից զրկված են եղել։

Կուլըժնըյը, իհարկէ, իր ներկայ աշխատութեամբ շատ էլ հեռու չէ գնում նոյնանման առաջարկներից, բայց նրա առաջարկած միջոցը այն առաւելութիւնն ունի, որ սովորեցնում է գիւղացուն սիստեմատիկ, տոկուն, ինքնուրոյն աշխատանքի իր դրութիւնը բարելաւելու գործում, զարկ է տալիս նրա թէ անհատական և թէ հասարակական ինքնագործունէութեան զարգացմանը։

Եւ Կուլըժնըյը գիւղացիութիւնը իր տնտեսական ծանր վիճակից դուրս հանելու միակ ելքը տեսնում է գիւղատնտեսական ընկերութիւնների մէջ։

Իսկ գիւղատնտեսական ընկերութիւնների անհրաժեշտութիւնն ու օգտակարութիւնը ցոյց տալու համար նա առաջ է բերում մի քանի ուշագրաւ տեղեկութիւններ, որոնցից երևում է, որ այն ժամանակ՝ երբ լայնածաւալ Ռուսաստանը ունի ընդամենը 1,500 գիւղատնտեսական ընկերութիւն, փոքրիկ Դանիան ամբողջապէս ցանցապատված է նրանցով, Գերմանիան ունի 20,000, Ֆրանսիան՝ 3,500, և այլն։

Բայց հէնց Ռուսաստանում էլ վերջին ժամանակներս, չը նայելով երկրի ներքին աննպաստ հանգամանքներին, նկատելի չափով բազմանում են գիւղատնտեսական և կօօպերատիվ ընկերութիւնները։

Գիւղատնտեսական ընկերութիւնները հիմնվելով մի որևէ գիւղում կամ գիւղախմբերում, ձգտում են, գլխաւորապէս, գիւղացիութեան մէջ գիտելիքներ տարածել աւելի լաւ կերպով հողը մշակելու և տնտեսութիւնը վարելու համար, նրա տնտեսութիւնը բարւոքելու նպատակով անհրաժեշտ գործիքները, մեքենաները, սերմերը և պարարտանիւթերը էժան գնով մատակարարելու ու ստացված բերքերը միասին արտահանելու համար, և որ գլխաւորն է՝ գիւղատնտեսական ընկերութիւնը իր միջոցով հնարաւորութիւն է տալիս գիւղացուն օգտվելու այնպիսի գործիքներից, որոնց ունենալը անհատական ույժերից վեր է։

Հեղինակը վերջում բացատրում է՝ թէ ինչպէս են հիմնում գիւղատնտեսական ընկերութիւնը և ինչպէս վարում նրա գործերը. այդ տեսակ գիւղատնտեսական ընկերութեան կանօնադրութեան մի որևէ օրինակը, գործի աջողութեան տեսակէտից, անհրաժեշտ էր կցել գրքոյկին, որը սակայն չէ արված: Գրքոյկի սկզբում զետեղված է բժ. Բուդաղեանի «Երկու խօսք» առաջաբանը, ուր նա, խօսելով մեր դպրոցներում գիւղատնտեսական գիտելիքներ աւանդելու անհրաժեշտութեան մասին, արծարծում է գիւղատնտեսական ուսուցչանոց հիմնելու հարցը։

Գիւղատնտեսական-մասնագիտական գիտելիքների դասաւանդման խնդիրը, որ քանիցս շօշափվել է «Մշակի» էջերում, հերթական անհրաժեշտութիւն է դառնում յատկապէս մեր գիւղական դպրոցների համար: Այդ հիման վրա ի սրտէ ողջունում ենք «գիւղատնտեսական ուսուցչանոցի» առաջարկը։

Առիթից օգտվելով՝ հրաւիրում ենք Կուլտուրական Միութեան և Բարեգործական Ընկերութեան ուշադրութիւնը այդ հրատապ, անյետաձգելի խնդրի վրա: Թերևս միացեալ ույժերով հնարաւոր լինէր այդ տեսակ ուսուցչանոցի խնդիրը շաղկապել Էջմիածնի ճեմարանի գոյութեան հետ, կանգնեցնելով վերջինս իր կոչման բարձրութեան վրա։

Կուլըժնըյի «Ինչպէս հիմնել գիւղատնտեսական ընկերութիւնը» ցանկալի էր որ մեծ քանակութեամբ տարածվէր գիւղերում: Գինը չափազանց մատչելի է, լեզուն դիւրըմբռնելի, տպագրութիւնը գրաւիչ և կատարված խնամքով: Վերջում զետեղված է սխալների ցուցակը։

Լ. Դ.

ՄԱՄՈՒԼ

Նոյեմբերի 2-ից Թիֆլիսում սկսեց հրատարակվել մի նոր ռուսերէն թերթ «Новости Закавказья» անունով պ. Գօտուայի խմբագրութեամբ։

Իր առաջնորդողի մէջ խմբագրութիւնը իր առաջիկայ գործունէութեան մասին ասում է հետևեալը.

Մեր բոլոր մտքերը և ջանքերը պէտք է այժմ ուղղված լինեն դէպի խաղաղ կուլտուրական աշխատանքը, դէպի ժողովրդի տնտեսական և հոգեկան վիճակի բարձրացումը, դէպի ձգտում զօրացնելու և կատարելագործելու ժողովրդական ներկայացուցիչների ստեղծագործական գործունէութիւնը և հաստատելու սահմանադրական-իրաւական կեանք, որը թանգ է բոլորին, որոնք կը ցանկային խաղաղ առաջադիմութիւն մեր մեծ հայրենիքի ժողովրդական ույժերին։

Առաջին երկու համարները կազմված են ճոխ բաժիններով և նուիրված են յօդուածներ ընթացիկ խնդիրների՝ թէ պետական և թէ մեր երկրի վերաբերեալ։

Ցանկանում ենք աջողութիւն։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ախալցխա, 1 Նոյեմբերի

Սրանով յայտնելով ի գիտութիւն հայ հասարակութեան և մանաւանդ օտար վայրերում ապրող մեր համաքաղաքացիներին, որ արդէն սկսել է իր գործունէութիւնը 1908 թ-ի յունիսի 16-ին Թիֆլիսի պ. նահանգապետի կողմից հաստատված «Ախալցխայի հայոց դրամատիկ սիրողների ընկերութիւնը», որը՝

§ 1) Նպատակ ունի Ախալցխայի հայ հասարակութեան մէջ գեղարուեստական և մտաւոր զարգացում տարածելու և նոյնպէս ի նկատի ունի իր կանօնադրութեան համաձայն կազմակերպած զանազան ներկայացումների արդիւնքից՝ աջակցել նիւթական նպաստներով տեղական բարեգործական հիմնարկութիւններին և օգտաւէտ ձեռնարկութիւններին, ինչպէս և՝

§ 2) Ախալցխայում թատրոնական շինութիւն չը լինելով՝ ընկերութիւնը նպատակ ունի հիմնել ապագայում հասարակական թատրոն՝

Վարչութիւնս կոչ է անում հայ հասարակութեան անդամներին աջակցել օժանդակել անդամակցական վճարներով և կամաւոր նուէրներով, որպէս զի ընկերութիւնս հնարաւորութիւն ունենայ իր ծրագրած նպատակին ըստ արժանւոյն հասնելու։

Դրամական նուէրները կարելի է ուղարկել վարչութեանս գանձապահ պ. Ստեփան Ստեփանեանին, իսկ մնացած դիմումները ուղղել վարչութեան նախագահին։

Ախալցխայի հայոց դրամատիկ սիրողների ընկերութեան վարչ. ժամ. նախագահ՝

Խաչ. Տէր-Ենոքեան

Անդամ-քարտուղար՝ Ս. Քարիմեան

Խ. ԱԲՈՎԵԱՆԻ ՅՈՒՇԱՐՁԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Վերադառնալով Թիֆլիս, լրագիրներից տեղեկացայ, որ Բագուի Հայոց Կուլտ. Միութիւնը արդէն կազմել է 12,000 րուբլու նախահաշիւ Աբովեանի յիշատակին յուշարձան կանգնեցնելու համար: Այդ առիթով անմիջապէս նամակ գրեցի Բ. Հ. Կուլտ. Միութեան գեղարուեստական սեկցիային, խնդրելով որ մրցանակ նշանակեն անխտիր կերպով և ոչ թէ յանձնեն որևէ մէկին, ինչպէս առհասարակ մեզանում լինում է, որ ոչ թէ միայն հայերն են տալիս, այլ և մեծ մասամբ օտարներին թէ արտասահմանում և թէ այստեղերը։

Ուստի այսօր կարդալով «Գործ» լրագրի № 45-ի էջերում պ. Շիրվանզադէի նամակը, որով կոչ է անում Բ. Հ. Կուլտ. Միութեանը մրցանակ նշանակել ոչ թէ միայն Ռուսաստանում, այլ և Եւրոպայում, ամբողջ հոգով միանալով նրա ցանկութեան հետ, պէտք է աւելացնեմ մի քանի խօսք. նախ այն է, որ անկասկած մրցանակը ամենալաւ և ամենաապահով միջոցն է ընտիր գործ ստանալու համար միայն այն պայմանով, որ նրա կազմակերպողները և ընտրողները լինեն գործին հմուտ և անաչառ մարդիկ։

Գալով պ. Շիրվանզադէին, պէտք է ասեմ, որ հայ արուեստագէտները երբէք չեն նեղանայ, որքան էլ նրանց չը տեսնելով անցնեն և օտարներին դիմեն։

Եթէ կայ հայ, հոգով արուեստագէտ, եթէ կայ նրա մէջ այն կրակը, նա երբէք չի նուաճվի այդպիսի հանգամանքների առաջ. նա ուրախութեամբ կը ցանկանայ մրցել օտարների հետ, նոյն իսկ նրա յոգնած սիրտը ու բազուկները կը կարողանան գործել աւելի եռանդով, եթէ ընդառաջ կը գան այդպիսի առիթներ և պահանջներ. Եթէ նա խոր թափանցէ իր ազգի սիրտը՝ կը կարողանայ իր ազգի գործիչի իղձերը և կատարած դերը պատկերացնել իր արուեստով և դրանով ստեղծել մի նոր գործիչ ներկայ և ապագայ հայութեան հա-

մար շատ բան սառդ, այն ժամանակ ի հարկէ շատ ուրախալի կը լինի. իսկ եթէ ոչ, թող այն ժամանակ օտարները արատղրին, եթէ կարող կը լինեն:

Միքայէլ Միքայէլեան

Թիֆլիս, 2 նոյեմբերի

«ԳՈՐԾ» ԼՐԱԳՐԻ ՏԳԵՂ ՎԱՐՄՈՒՆՔԸ

(Նամակ խմբագրութեան)

Էջմիածին, 17 հոկտեմբերի

«Մշակի» ընթերցողներին յայտնի է, որ մենք բողոքել էինք մեր լիակատար ստորագրութեամբ պրոֆ. Մառի համար եկեղեցական Թանգարանը չը բանալու տխուր և ցաւալի իրողութեան դէմ: Ներսիսեան դըպրոցի ուսուցչական խմբից 12 հոգի իրանց զայրոյթն էին յայտնել «Մշակի» մէջ. նոյնն ուղարկված է եղել խմբի կողմից և «Գործ» լրագրին: Բայց վերջինս չէր տպագրել, առարկելով որ «Մշակը» «վարկաբեկված է իր միտումաւոր սռերով» և թէ սպասում է տեղեկութիւնը ստուգվի: Երեւակական մի դատողութիւն էր այդ, որ արդիւնք էր կուսակցական օպիումի ազդեցութեան տակ կատարված մտածողութեան: Ի՞նչ մեղք ունէր այդտեղ «Մշակը»: Յօդուածագիրը Էջմիածնի միաբանութեան անդամներից մէկն էր, ոչ անծանօթ իր հասարակական, գրական-բանասիրական գործունէութեամբ. նա ոչ «Մշակի» աշխատակից է եղել և ոչ նրա կուսակցութեան կողմնակից, այլ միայն հիւրընկալութեան յուսով իր բողոքը ուղղել էր նրան:

Սրան հետեւեց ս. Սուրէնեանի անհիմն և իրականութեան անհամապատասխան հերքումը, որ ուղղված էր ոչ միայն «Մշակին», ուր տպված էր մեր բողոքը, այլ և «Գործ» ու «Հովիւ» թերթերին: «Գործը» չը բաւականացաւ միայն ս. Սուրէնեանի նամակի տպագրութեամբ, այլ «Լրատու» վերնագրով բաժնում մեր գրութեամբ «իրողութիւնը բոլորովին աղաւաղած» հաչակեց, իսկ մեզ էլ անվստահելի և «մութ աղբիւր» (№ 6): Բայց այս բաւական չէր, նա տպեց հետեւեալ համարում «Դիտող» կեղծ անուան տակ թաքնված մի անձի «Վանականի խարդախութիւնը» վերնագրով յօդուածը մեր դէմ, ուր ի միջի այլոց հեղինակը այն միտքն էր յայտնում, թէ մենք մեր բողոքով գրութեամբ կամեցել ենք «հովանաւորող հանդիսանալ պրոֆ. Մառին» և թէ վերջինս «մի Գարեգին վարդապետի պրոտեկցիայի կարօտ չէ»: Այսպէս են դատում և իրողութիւնները գունաւորում ցամաք ուղեղով և անազնիւ սրտով մարդիկ:

Այդ ժամանակ բացակայ էինք Էջմիածնից. վերադառնալուց յետոյ նախ հեռագրով և ապա նամակով պատասխան գրեցինք այն թերթերին, որոնք տպագրել էին ս. Սուրէնեանի նամակը: Ընթերցողները առանձին պարզութեամբ տեսան, թէ ինչպէս անհիմն և իրականութեան անհամապատասխան էին սրբ. Սուրէնեանի պատճառաբանութիւնները: Միջանկեալ կերպով ասենք, որ նրա «հերքման» մէջ ուրիշ անճշտութիւններ էլ կային, որ երկրորդական համարելով աւելորդ էր պատասխանել: «Գործ» բանաւոր համարեց մեր պատասխանի տպագրութեան մէջ նոյն փութկոտութիւնը ցոյց չը տալ. այդ ժամանակ Երեւանի գործակալները մաշում էին սինօդականներից ոմանց դրան շեմքերը պ. Վասիլեւսկի-գարեանի կաթողիկոսական պատգամաւորական ընտրութիւնը բեկանել տալու. խոհեմութիւնը պահանջում էր սպասել, չը տալ ոչինչ սրբ. Սուրէնեանի դէմ: Առ հասարակ «Գործի» նման թերթերը շատ վարպետ են հասկանալու, երբ պէտք է մէկին պաշտպանել, երբ մէկին տարապարտ վարկաբեկ անել, ամեն ինչ կապված իրանց շահերի և յետին նպատակների հետ, բայց ոչ ճշմարտութեան: Մեր պատասխանը երկու շաբաթ մնաց խմբագրատանը և միայն հոկտեմբերի 10-ին լոյս տեսաւ: Բայց ինչպէս: Մի անհոգին խմբագրական սօփեստական ծանօթութեամբ և մի կարեւոր կտորի կրճատմամբ: Ահա այսպէս են այդ մարդիկը հետեւում «Audiatur et altera pars» սկզբունքին: Ժայռից աւելի հեշտ է հեղուկ քամել, քան անաչառութիւն սպասել նրանցից: Բայց որպէս զի նրանց վերջին ժաղն էլ կորենք, որից կախված պաշտպանում են ս. Սուրէնեանին՝ փարիսեցիական դիմակը պինդ երեսներին ծածկած, յայտնում ենք, որ ոչ միայն 2—3 ժամվայ մէջ, այլ աւելի կարճ ժամանակում էլ հնարաւոր էր բանալ Թանգարանի դռները: Այն ինչ պրոֆ. Մառը իւրայինների հետ վանքը գնաց ժամը 9—9½-ին և մեկնեց դէպի Երեւան՝ ժամը մօտաւորապէս 5-ին:

Սակայն «Գործի» բռնած դիրքը աւելի պարզ է երեւում կրճատված կտորի խնդրում: Մենք գրել էինք. «Պարոն կամ ծայր «Դիտողը» թող իր անունը յայտնէ, որպէս զի երես առ երես հասարակութեան կամ դատարանի առաջ կանգնել կարողանանք և հաստատել, թէ ո՞րն է մեզանից «խարդախը»: Եթէ ճշմարտութիւն էր գրել «Դիտողը» և «Գործի» խմբագրութիւնը համոզված էր այդ բանում, ինչո՞ւ չէր տպել այդ կտորը:

«Գործի» ցոյց տուած այս ազնիւ և շիտակ մարդկանց անվայել ընթացքը ամբողջ խնդրի պատմութեան մէջ պարզելուց յետոյ, մենք նորից դիմում ենք՝ բանալ «Դիտողի» իսկական անունը: Կեղծանունը լրագրութեան մէջ ընդունված է, բայց ոչ չարամտութեան համար: Ստութեան և կեղծիքի հերոսները և գրական անբարոյականներն են միայն, որոնք կեղծանուան ծածկութի տակ անմաքուր նպատակների համար մեքենայութիւններ են լարում: Թող «Դիտողը» հէնց ինքը յայտնէ իր անունը, ապա թէ ոչ ընթերցող հասարակութիւնն էլ մեզ հետ իրաւունք կունենայ եզրակացնելու, որ նա վերոյիշեալ կատեգօրիայի անձնաւորութիւն է:

Գարեգին վարդ. Յովսէփեան

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳ. ԳՈՐԾ.

3 նոյեմբերի

ՌՈՍՏՕՎ Դ./Վ. Դոնի վրա նաւագնացութիւնը կանգ առաւ: Մնում է մօտ 5 միլիոն պուդ ցորեն բեռնելու:

ՍԵՎԱՍՏՕՊՈԼ: Մեծ Իշխան Ալեքսէյ Ալեքսանդրովիչի մահվան առիթով գրօշակների տեղափոխութեան հանդէսը յետաձգվեց:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Մի օրում խօլերայով հիւանդացան 5, մեռան 5 հոգի: Գաւառում մեռան 2 հոգի:

Իսկական գաղտնի խորհրդական Լուբեցկին նշանակվում է Թիֆլիսի դատաստանական պալատի նախագահ:

Պետերբուրգի Հեռ. Գործակալութիւնը շարունակում է ամեն օր տեղեկութիւններ ստանալ Ռուսաստանի զանազան քաղաքներից Մեծ Իշխան Ալեքսէյ Ալեքսանդրովիչի համար հոգեհանգիստներ կատարելու մասին:

ԽԱՐԿՕՎ: Դիլեեվկա կայարանում 10 չարագործներ կապեցին ծառայողներին, կողոպտեցին նրանց և ճանապարհորդներին ու, յափշտակելով գանձարկղից փողերը, անյայտացան:

ԱՍՏՐԱԽԱՆ: 13 աստիճանի սառնամանիք է:

ԿՕՍՏՐՕՄԱ: Իւրիեվի գաւառում, Կուլեշօվօ գիւղում, մի գիւղացու տանը գտան 5 ռումբ, անլեգալ գրուածքներ և թռուցիկներ:

ՄԻՆՍԿ: Գտան գրամանենգութեան փաբրիկա: Ձերբակալված են 3 մարդ:

ՕԴԵՍՍԱ: Փակվեց հարաւ-ռուսական նկարիչների պատկերների հերթական ցուցահանդէսը:

ՀՌՈՄ: Ս. Պետրոսի գեղեցիկ տաճարում հանդիսաւոր պատարագ մատուցվեց պապի քահանայական աստիճանի 50-ամեայ յօբելեանի առիթով: Ներկայ էին օտարազգի միապետների ներկայացուցիչները, դիպլօմատիական մարմինը, 28 կարդինալներ, մի քանի արքեպիսկոպոսներ, 280 եպիսկոպոսներ, պապի ազգականները, բազմաթիւ պատգամաւորութիւններ Իտալիայից և ուրիշ երկիրներից:

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ
Գունաւոր պատկերազարդ մանկ. գրադարանի №1.

ՇՈՒՆՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

Բանաստ. Յովհ. Թումանեանի
Նկարներ Գ. Երիցեանի
Գինն է 25 կ.

Վաճառվում է Թիֆլիսի գրավաճառանոցներում: Գումարով առնողները կարող են դիմել հրատարակիչ՝ իշխ. Մ. Թումանեանին. Тифлисъ, ул. Паскевича № 6.

Գումարով առնողներին 20 % զեղչ: Ապառիկ չէ ընդունվում:

(օ. մ.) 5—1

ԱՒՏՕՄՕԲԻԼՆԵՐ

ապրանքակիր և օմնիբուսներ, նաւթաշարժ և կերօսինաշարժ, երկու և չորս տակտից, նորերը և քիչ բանեցված, վաճառվում է էժան գնով. Պետերբուրգ, Նէվսկի, 135, Технич. к-ра Десперъ и Кроссъ.

(5, 15) 165187 2—1

ՓՈՐՁԵՑԷՔ ՁԵՐ ԲԱԽՏԸ

Մասնակցեցէք ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ 905,000-րուբլիանոց մեծ խաղարկութեանը: Գլխաւոր գումարներն են՝ 75,000, 40,000, 20,000, 15,000, 10,000, 8,000, 4,000, 2,000 1,000 և ուրիշ շատեր: Խաղարկութիւնը տեղի է ունենում Պետական Բանկի Վարշաւայի Գրասենեակում:

ՏԱՍԸ խաղարկութեան օրեր՝ նոյեմբերի 26-ից մինչև դեկտեմբերի 8-ը: Ամբողջ տոմսակի գինն է 90 ռուբ., ½ տոմս.—45 ր., ¼ տոմս.—23.: Փողը ստանալուն պէս անմիջապէս ուղարկվում են իսկական տոմսակները: Վերադիր վճարով չեն ուղարկվում: Խաղարկութիւնից յետոյ ուղարկվում է պաշտօնական աղիւսակը ձրիաբար:

Հասցէագրել՝ Варшава, Новолипье 50. I. ГРИНБАУМУ.

(5, 9, 16) 55813 3—1



ԴԵՂԱՀԱՏՆԵՐ
Cascara Midy

Ֆրանսիական ժողովրդական միջոց
ՍՈՎՈՐԱԿԱՆ ՓՈՐԿԱՊՈՒԹԵԱՆ դէմ

Ընդունելութեան չափը. 2 դեղահատ երեկոները, պառկելուց առաջ.
Cascara Midy-ն (Կասկարա Միդի) չէ առաջացնում որովայնի մէջ ցաւեր, ոչ էլ հեւոց և փորլուծութիւն:
Դեղավաճառանոց MIDY, 140, faubourg St. Honoré, Парижъ. Ռուսաստանի գլխաւոր դեղավաճառանոցներում:

(5, 15, 25) (320257) 0—4



5000 ՄԱՐԴ

մեռնում է իւրաքանչիւր տարի

եկզեմայից, որը առաջանում է վարսավիրների մօտ սափրվելու ժամանակ: Դրա համար և խնայեցէք ձեր առողջութիւնը և սափրվեցէք ինքներդ:

2 ՌՈՒԲ. 50 ԿՈՊ.

ուղարկում ենք սափրվելու համար պարագաներ, չքնաղ ֆուտլեարի մէջ. 1) Ածելի՝ ամենալաւ յատկութեան, իսկական «Զօլինգէն», 5 տարվայ երաշխաւորութեամբ. 2) Փուտլեար ածելի համար. 3) Կաշի՝ սրելու համար. 4) Նիկկելեայ վրձին. 5) Նիկկելեայ թաս. 6) Մի արկղիկ սապոնի փոշի. 7) Մի արկղիկ շպար. 8) Ցկված հայելի: Նոյն այդ պարագաները անվտանգ ածելի հետ—3 ր.: Մազերը և միրուքը խուզելու համար մեքենայ—2 ր. 50 կ. և 3 ր. 50 կ.: Ճանապարհածախքը 40 կոպ. (Սիբիր՝ 75 կ.): Ուղարկումը վերադիր վճարով և առանց կանխավճարի: Հասցէ՝ А. Эйзенблятъ, Варшава, Кармелицкая № 3—23.

(5, 7, 12, 19, 25) 54147 5—1

ՊՈՄԱԴԱ.

Մազերը բուսցնելու և ամրացնելու համար: Իսկական և փորձված միջոց մազերը թափվելու դէմ: Շուտափոյթ ամրացնում և երկարեցնում է մազերը: Այդ պոմադան ՄՕՌՈՒԲԻՆ և ԲԵՆԵՐԻՆ տալիս է գեղեցիկ փայլ և բուսցնում է նրանց: Գործածելու ժամանակ քսել մազերի արմատներին և առհասարակ գործածել որպէս պոմադա: Գլխաւոր պահեստը՝ «Кавказское Товарищество Торговли аптекарскими товарами» въ Тифлисѣ, Баку и Батумѣ. Վաճառվում է նոյնպէս դեղատներում և դեղատնային պահեստներում: Գինը 1 րուբլի:

(կ. չ.) 6—5



ՓԱԼԻԵՐԻ ՓՈՍՖԱՏԻՆ

Դուրեկան կերակուր, ամենայարմարը երեխաների համար, սկսած 6—7 ամսական հասակից մինչև 10 տարեկան հասակը, գլխաւորապէս ծծից կտրած ժամանակ և ամառն շրջանում: Հեշտացնում է ատամների դուրս գալը և պայմանաւորում է ոսկորների համաչափ զարգացումը: Ծախվում է դեղատնային խանութներում և դեղավաճառանոցներում:

(չ.) 10—5

ԱՎՍԱՐԳԻՍՕՎԻ

այգին բաց է թողնում արտասահմանեան, ռուսական և կովկասեան տեսակի մրգատու ծառեր: Կայարան ՍԿՐԱ, Անդրկով. երկ., Ախալքալաքին: Կատալօգը ուղարկվում է ՁՐԻ

(կ. չ. ու.) 5—5

УГОЛЬ
КУЗНЕЧНЫЙ, ПАРОВИЧНЫЙ,
ПЛАМЕН., АНТРАЦИТЪ, КОКСЪ.
ЦѢНЫ ОПТОВЫЯ.
А. БРАУХЛИ, Харьковъ.

(ա. օ.) 52—44

ԲԺԻՇԿ
Ա. Մ. ԱՄԻՐԽԱՆԵԱՆ
Ներքին հիւանդութիւններ

Ընդունելութիւն ամեն օր { 11—12 ժ. առաւ. / 5—6 ժ. երեկ.
Վելեամինօվսկայա փող., № 10.

(ա. օ.) 100—7

Открыта подписка на 1909 г. на двухнедѣльный журналъ (4-й годъ изданія).

„ЯСНАЯ ПОЛЯНА“

Въ журналѣ печатаются издававшіеся заграницею журналы освободит. движенія.

„БЫЛОЕ“, „ИСКРА“ и „КОЛОКОЛЪ“ А. Герцена.

24 КНИГИ ПРИЛОЖ. СЛѢДУЮЩАГО СОДЕРЖАНІЯ:

4 КНИГИ полнаго собранія соч. ИММАНУИЛА КАНТА, переводъ по тексту, изданія Дюрра въ Лейпцигѣ подъ редакціею профессора Карла Форлендера.

4 Кн. «Библіотека Знанія» сочиненій проф. Виндельбанда. Гефдинга, Рилл и др., въ образц. перев. подъ ред. и вступ. статьями доктора фил. Г. Полонскаго и проф. К. Жакова.

1 Кн. Разсказъ о семи повѣшенныхъ, ЛЕОНИДА АНДРЕЕВА, съ портр. біогр. и вступит. статьею проф. К. Жакова.

4 книги «Художественныя сокровища всѣхъ странъ и народовъ» (картины съ объяснительнымъ текстомъ).

4 книги «КРУГЪ ЧТЕНІЯ»—мысли мудрыхъ людей, собранная Гр. Л. Н. Толстымъ.

4 книги Сборникъ сочиненій бывшихъ до сихъ поръ подъ запретомъ въ Россіи.

3 книги ИСТОРІИ РОССІИ

Подписная цѣна на ГОДЪ съ пересылкою 7 р.

ДОПУСКАЕТСЯ РАЗСРОЧКА:
При подпискѣ 3 руб., къ Пасхѣ 1909 г. и въ Іюнѣ по 2 р., при 7 мѣсяцевъ по 1 руб. (нал. плат. 1 руб. 30 к.)

По примѣру прежнихъ лѣтъ первые 5000 подписчиковъ, подписавшіеся хотя бы и въ разсрочку, получатъ еще безплатно 24 выпуска «Народнаго Университета». (Лекціи, читанныя профессорами н лекторами) подъ редакціей К. И. АРАБАЖИНА и 24 выпуска «Исторіи Революціи» всѣхъ странъ и народовъ. Вышелъ № 1 съ 1 выпускомъ Народнаго Университета и Исторіи революціи. Остальные №№ будутъ аккуратно выходить 1 и 15 числа каждаво мѣсяца. Требованія адресовать: С. Петербургъ, Лѣсной Корпусъ, книгоиздательство «Ясная Поляна». Подробное объявленіе высылается безплатно.

ԺԱՄԱՑՈՅՑ եւ ԱԾԵԼԻ

ԱՄԵՆՔԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԻՐԵՐ

Մոսկվայի Ժամացոյցների Կենտր. Պահեստ

ՈՒՂԱՐԿՈՒՄ է 150 իրեր միայն 8 ր. 95 կ.

1) Անգլիական ոսկ պողպատէ տղամարդկանց կամ կանանց բաց ժամացոյց: Ժամացոյցի մեխանիզմը արտասահմանեան շինուածք է և պարգևատրվել է ժամացոյցի համաշխարհային ցուցահանդէսում: Լարվում է առանց բանալիի (ռեմօնտուար): Ժամացոյցը բանում է րոպէ առ րոպէ, որի համար երաշխաւորութիւն է տրվում. 2) Տղամարդկանց կամ կանանց նորաձև պարանոցի շղթայ. 3) Գեղեցիկ տեսքի բրելոկ. 4) Ժամացոյցը գողացվելուց ազատ պահող գործիք. 5) Անգլիական լաւագոյն պողպատէ ածելի. 6) Ածելիաման. 7) Նիկէլի փոքր թաս սապոնի համար. 8) Վրձին սապոնվելու համար. 9) Սապոնի փոշու արկղիկ. 10) Թաւշեայ շպարի արկղիկ. 11) Կարապի բմբուլից փնջիկ շպարվելու համար. 12) Ցանկացողներին ածելիի և իր պարագաների փոխարէն կարող ենք ուղարկել կանացի նորաձև բրօշկա և մի զոյգ պարիզեան գեհարազարդ ականջօղեր. 13—14) Տուալէտի արդուզարդարանք, բաղկացած հայելուց, սանրից և կօշիկներ կոճկելու կարթից. 15—19) Գարնիտուր, բաղկացած կրծքի 2 և մանժէտի 3 արտասահմանեան աշխատանքի զապօնկաներից «Մօդերն» ոճով, կամ թէ սրա փոխարէն կանանց սանրեր. 20) Ամերիկական գրպանի մկրատ. 21) Գրպանի դանակ. 22—24) Գրպանի մատիտ և գրիչ. 24) Ճանապարհորդական գրպանի թանաքաման. 25) Պարիզեան ստերէօսկօպ մեծացնող ապակիներով. 26—75) 50 լուսանկարչական զուարճ նկարներ ստերէօսկօպի համար. 76—100) 25 Carte postale, բաց նամակներ գեղեցիկ իւղանկարներով, որոնք կարող են մի ալբոմի զարդը դառնալ. 100—125) 25 լաւագոյն պօստային թուղթ. 126—150) 25 այցելուի թղթեր: Բոլորի համար միայն 8 ր. 95 կ.: Նոյն իրերը, խուլ ժամացոյցով—1 րուբլով թանգ, այսինքն 9 ր. 95 կ., իսկ արծաթեայ խուլ ժամացոյցով միայն 16 ր. 95 կ.:

Ինչպէս տեսնում էք, սրանից էժան չէ կարող լինել:

Ուղարկվում է և վերադիր վճարով

Ծրարելը ձրի: Գործադրութիւնը օրինակելի: Ուղարկելու համար յաւելեալ առնըվում է Եւրոպական Ռուսաստան՝ 65 կ., իսկ Ասիական—95 կ.:

Լաւութեան լիակատար երաշխաւորութեամբ.

Պատուէրները հասցէագրել Московскій Центральный Складъ Часовъ

Խնդրում ենք չը խառնել վարչական ֆիրմաների հետ.

Москва, домъ Виноградова, № 126.

P. S. Փողով կամ նամակադրոշմներով գրաւական ուղարկողներին իբրև նուէր ուղարկվում է գեղեցիկ քորոց փողպատի (գալստուկի) համար:

(կ. չ.) 36—31

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
ԿԱՐԱՊԵՏ ԱՓԻՆԵԱՆԻ
ԾՈՑԻ և ՊԱՏԻ
1909 Թ.
„ՇԻՐԱԿ“
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ
ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ
(Տասնմէկերորդ տարի)

Բոլորովին նոր յաւելուածներով ճոխացրած ու հարստացրած և գունաւոր պատկերներով զարդարած: Դիրքն ու ծաւալը բոլոր եղած հայ օրացոյցներից մեծ և արտաքինով շքեղ:

ԾՈՑԻ ՕՐԱՑՈՅՑԸ պարունակում է վիճակագրութիւն ռուս. եկեղ. և վանական հողերի ու կալուածների: Մուրհակների օրէնքներ և օրինակներ, չափ և կշիռ, դրամներ: Դրոշմատուրք, բնակարանի հարկ, վարձատրութիւն նոտարների, դատական պրիստավների, երդուեալ-հաւատարմատարների: Փոստ և հեռագիր, պօստային նոր օրէնքներ, խնայողական գանձարաններ: Զինուորագրական օրէնքներ, նորակոչ զինուորների չափը, անցագրեր և բողոքելու սահմաններ: Կտակի օրէնքներ, օրինակներ, կեղծ ու անվաւեր կտակներ: Հարուստ բժշկարան, առողջապահական խորհուրդներ—խմելու ջուրը, մարդկանց երկարակեցութիւնը: Մարդու ընդունած սնունդը, սննդի նշանակութիւնը, ինչպէս է կատարվում մարսողութիւնը: Հացահատիկների մշակման նոր ձեւ—հացաբոյսերի շիթիլ և նրա օգուտները, մեղուաբուծութեան օգտակարութիւնը, խորհուրդներ մեղուաբոյծներին: Կառավարութեան ձեւեր, ինչ է սահմանադրութիւնը, օսմանեան սահմանադրութիւնը, թիւրքահայոց սահմանադրութիւնը: Հիպնոտիզմ, երկրի սկզբնական վիճակը, գիսաւոր աստղեր, մարդու սկզբնական լեզուն, աղքատանք, մահ և հիւանդութիւն, հրաշ, իշխանութեան ծագումը, մայրական սէր, թոքախտաւոր հօր կտակը, ծեր մշակի խորհուրդները երիտասարդներին, ամերիկական զօրքը: Քաղաքավարական բարոյական ակնարկներ, և չորս թեւով գիտելիքներ, տնտեսական խորհուրդներ, պառողների բժշկական նշանակութիւնը, աշխարհիս հրաշալիքները, շահի և սուլթանի ներքին կեանքը, գրքերի թշնամիները և գրադարանի ոչնչացումը, մարդու արժէքը ճորտութեան ժամանակ, մահվան վերջին վայրկեանները: Կենսագրութիւններ՝ Իզմիրլեան, Շահազիզ, Պռօշեան, Արփիարեան, Դոդոխեան, Մուրացան և Սաթթար-խան (պարսից վերջին յեղափոխականը) իրանց գունաւոր պատկերներով: Հանելուկներ, ռեբուսներ, զուարճալի վիճակարան: Երեսների թիւ—300:

ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑԸ պարունակում է ընտիր մտքեր, աֆորիզմներ, հարուստ ժամանակագրութիւն և բանաստեղծական փոքրիկ հատուածներ ամեն առաջին երեսի վրա, եկեղ. և ազգային տօների պատմական բացատրութիւններ, զանազան հեթանոսական սովորութիւններ, գիտական նորութիւններ, բնութեան երեւոյթների բացատրութիւններ առողջապահական, բժշկական խրատներ, արհեստների վերաբերեալ օգտակար գիտելիքներ, խաղօնացիների, հնդիկների, հայկերի և քրդերի կեանքից զուարճալի պատմութիւններ, պատմական նշանաւոր դէպքեր հայկական, ռուսական և եւրոպական կեանքից, հետաքրքիր թիւեր և տեղեկութիւններ, ինչպէս են ծախսվում հասարակական գումարները, զինուորական ուժ և պատերազմական ծախքեր: Հողը Ռուսաստանում, ում ձեռքին են հողերը: Ազգային քնար—նորագոյն բանաստեղծութիւններ, աշուղական խաղեր—սիրոյ երգեր, հետաքրքիր տեղեկութիւններ բուսական և կենդանական աշխարհից, թռչունների և կենդանիների հետաքրքիր կողմերը, կենսագրութիւններ, զուարճալի դէպքեր մեծ մարդկանց կեանքից: Ժողովրդական առածներ, երգեր, լեզներ, զուարճալի ն ո ր ա ս ո ւ թ ն ե ր, տնային տնտեսութեան վերաբերեալ կարևոր խրատներ, բանաստեղծական խորհուրդներ, հանելուկներ, շուտասելուկներ, վիճակներ և այլ զուարճալի տեղեկութիւններ:

ՏԱԽՏԱԿԸ յայտնի նկարչի գործ է, պատրաստված լիտոգրաֆիայում 6 գոյնով, ներկայացնում է թիւրքահայ ժողովրդի առաջ խորտակված բանտի դռները, գաղտնիքների բռնութեան պահապան վիշապը, ջախջախված հայ սարկութեան շղթաները և թիւրքահայ մանուկը ողջունում է հայրենիքի ազատութեան նոր տարին:

Գները՝ պատինը—50 կոպ., ծոցինը—20 կ., գումարով գնողներին զեղչ:

Դիմել՝ Александрополь типографія «Ширакъ», Карапету Апинянъ. Արտասահմանից—Alexandropoj Karapet Apinian (Caucase).

Ալեքսանդրապօլում չը դիմել ուրիշ ոչ մի հասցէով:

(չ. չ.) 8—4